ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՀԵՔԵՔՅԱՆ

ՍԱՅՐԵՆԻ

Վաճառքի ենթակա չէ:

4

Մաս 1

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ՀԵՔԵՔՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ

Երրորդ, վերամշակված
հրատարակություն

4

Մաս 1

Նկարիչ՝ Սուսաննա Այվազյան

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

Երևան 2019

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.167.1: 809.198.1 (075.3)
ԳՄԴ 81.2 Հ g72
Գ 697

Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն.
Գ 697 Մայրենի 4: Մաս 1: Հանրակրթական դպրոցի դասագիրք (երրորդ, վերամշակված հրատարակություն). -Եր.: Էդիթ Պրինտ, 2012.- 88 էջ:

ՀՏԴ 373.167.1: 809.198.1 (075.3)
ԳՄԴ 81.2 Հ g72

ISBN 978-9939-52-549-5
© Գյուրջինյան Դավիթ, Հեքեքյան Նարինե, 2019 թ.
© Էդիթ Պրինտ հրատարակչություն, Երևան 2019 թ.

1 ՈՒՄ ՆՎԻՐԵՄ ԻՄ ՍԻՐՏԸ



ՅՈԹ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

Հայը դարերով սիրով է պահել
Յոթ թանկ սրբություն.
Հողը, պատիվը, շինարար ոգին,
Հավատը, լեզուն։
Սուրբ անուններ են եղել դարերով
Հայ ընտանիքը,
Եվ ամենից վեհ, ամենից լուսե
Մայր հայրենիքը։

Սուրեն Մուրադյան

ԼԱՎ ԸՆԿԵՐԸ 1

(ըստ Աստվածաշնչի)

Մի անգամ Հիսուսն իր շուրջը հավաքված մարդկանց այսպիսի պատմություն պատմեց։

Մի մարդ ճամփա ելավ։ Դա ոլորապտույտ և ամայի ճանապարհ էր, որի երկու կողմերում հսկայական ժայռեր էին վեր խոյանում։ Ճանապարհը նաև վտանգավոր էր, որովհետև քարերի հետևում դարանակալում էին ավազակները։



Մարդը միայնակ էր ճամփորդում, քսակում էլ բավական շատ փող ուներ։ Կարող եք կռահել, թե ի՞նչ պատահեց. ավազակները հարձակվեցին նրա վրա, խլեցին քսակը, ծեծեցին նրան, նույնիսկ գողացան հագուստը և փախան։ Ճամփորդը վիրավոր ու արյունաքամ ընկած էր և չէր կարողանում տեղից շարժվել։

- Օգնությո՛ւն, օգնությո՛ւն,- կանչում էր նա։

Քանի որ անմարդաբնակ վայր էր, ոչ ոք չլսեց նրան։

Հանկարծ վիրավորը մոտեցող ոտնաձայներ լսեց։

- Օգնությու՛ն,- կանչեց նա,- խնդրում եմ, օգնե՛ք ինձ:

Այն մարդը, որն իջնում էր ճանապարհով, լավ էր հագնված: Նա նայեց ճանապարհին ընկած խեղճ վիրավորին ու նկատեց արյունը: «Եթե ես մոտենամ և օգնեմ այս խեղճին,- մտածեց նա,- կարող եմ իմ շքեղ հագուստը փչացնել»: Այդ պատճառով էլ ձևացրեց, թե չի տեսել ընկածին, և արագ հեռացավ:

«Ես արյունաքամ կլինեմ»,- մտածեց վիրավոր ճամփորդը:

Քիչ հետո կրկին ոտնաձայներ լսվեցին: Վիրավոր ճամփորդն ուժերը հավաքեց ու կանչեց.

- Օգնությու՛ն, օգնությու՛ն:

Անցորդը շտապում էր: Նա, իհարկե, լսեց օգնության կանչող վիրավորի ձայնն ու մի հայացք գցեց նրա վրա, սակայն գլուխն իսկույն շրջեց: «Եթե օգնեմ այս մարդուն, կուշանամ: Ձևացնեմ, իբր չլսեցի»,- որոշեց նա ու քայլերն արագացնելով՝ շարունակեց ճանապարհը:

«Հիմա կմեռնեմ,- մտածեց խեղճ ճամփորդը:- Ոչ ոք օգնության ձեռք չի մեկնում ինձ»:

ճամփորդ հայացք արյունաքամ ոչ ոք իբր

Առած

Հավքը թևով կթռչի,
մարդը՝ բարեկամով:

Հայկական

Բառախաղ

Գութը գտավ գթառատին,
Գթառատին գթասիրտ,
Գլուխ գլխի տվին երկար
Եվ անգութին ... գթացին:

Բառերի գանձատուփ

1. *Շարքերից ընտրի՛ր և կողք կողքի գրի՛ր հոմանիշ բառերը:*

հսկայական	*անմարդաբնակ*	*շքեղ*	*ոլորապտույտ*
ծուռումուռ	*ճոխ*	*խոշոր*	*ամայի*

2. *Գրի՛ր վտանգավոր և հսկայական բառերի հականիշները:*

3. *Մեկ բառով ինչպե՞ս կասես՝*

ա) *օգնության ձեռք մեկնել,* **բ)** *հայացք գցել:*

4. *Ոտնաձայն բառը բաղադրիչների՛ բաժանիր։ Երկրորդ արմատով բարդ բառեր կազմիր։*

5. *Ընթանալ, գնալ, լվանալ բառերի արմատներով և -ացք ածանցով բառեր կազմիր հայացք բառի նմանությամբ։*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Գրի՛ր դեպքերի նկարագրությունը.*

ա) *Մի մարդ ճամփա ելավ։*

բ) *Նա միայնակ էր ճամփորդում, քսակում էլ շատ փող ուներ։*

գ) *..... և այլն։*

2. *Նկարագրի՛ր այն ճանապարհը, որով անցնում էր մարդը։*

3. *Նկարագրի՛ր այն երկու անցորդներին, որոնք չօգնեցին վիրավորին։*

4. *Ինչպե՞ս կվարվեիր, եթե վիրավոր մարդը քո ճանապարհին ընկած լիներ։*

Պատմությունների զամբյուղ

1. *Մանուկների Աստվածաշնչից Հիսուսի մեկ ուրի՛շ պատմություն կարդա և պատմի՛ր ընկերներիդ։*

2. *«Քարսիրտ մարդու վերջը» վերնագրով շարադրությու՛ն գրիր։*

Տեքստի սկզբնամասում գտի՛ր այն բառը, որ նշանակում է՝ թաքնվել՝ մեկի վրա հանկարծակի հարձակվելու համար։

Դադարի պահ

Քսակ է կոչվում այն փոքրիկ տոպրակը, որի մեջ անցյալում փող էին պահում։ Հիմա քսակի փոխարեն օգտագործում են

դ									կ

ԼԱՎ ԸՆԿԵՐԸ 2

(ըստ Աստվածաշնչի)

Ճանապարհին անօգնական ընկած հուսահատ վիրավորը ծարավ էր, վերքերն էլ ցավում էին, իսկ արևն ավելի ու ավելի կիզիչ էր դառնում: Հանկարծ նա կրկին մոտեցող ձայն լսեց, բայց այս անգամ ոչ թե մարդու ոտնաձայներ, այլ ավանակի դոփյուններ:

Ճամփորդը շատ էր թուլացել, գրեթե ուժասպառ էր եղել: Նա փորձեց ձայն տալ, օգնության կանչել, բայց կարողացավ միայն հազիվ լսելի ձայնով շշնջալ.

- Օգնեք ինձ, խնդրում եմ, օգնեք ինձ:

Ավանակով ճամփորդող մարդը, որ օտարական էր, լսեց վիրավորի թույլ կանչը: Նա նայեց ճանապարհին ընկած մարդուն ու անմիջապես գուշակեց կատարվածը: «Խեղճ մարդ,- հուզված մտածեց նա,- ես կփորձեմ օգնել քեզ»:

Օտարականը հանեց իր պայուսակը, որի մեջ դեղորայք, վիրակապ և ջուր կար: Նա խնամքով մաքրեց վիրավոր ճամփորդի վերքերն ու վիրակապեց, ջուր տվեց, որ խմի ու ծարավը հագեցնի, հետո զգուշությամբ նստեցրեց ավանակի վրա:



Բարի մարդը քայլում էր ավանակի կողքով՝ մի ձեռքով պահելով նրա վրա նստած վիրավորին: Շուտով հեռվում առկայծող լույսեր երևացին, և օտարականը թեթևացած շունչ քաշեց. արդեն մոտենում էին փոքրիկ

իջևանատանը: Նրանք շատ դանդաղ էին գնում, բայց փրկության հույսը ուժ էր տալիս նրանց: Վերջիվերջո տեղ հասան: Իջևանատերը դուրս վազեց՝ օտարականին օգնելու: Նրանք խեղճ ճամփորդին ներս տարան ու պառկեցրին մահճակալին: Վիրավորը, իհարկե, փող չուներ. չէ՞ որ նրան կողոպտել էին և ամբողջ փողը գողացել:

անօգնական դեղորայք առկայծել իջևանատուն վերջիվերջո ծախսել

- Ոչինչ,- իջևանատիրոջն ասաց օտարականը:- Ահա՛, վերցրու՛ այս փողը: Վաղը ես պետք է շարունակեմ ճանապարհս, բայց դու, խնդրում եմ, խնամի՛ր նրան, մինչև որ լավանա: Եթե ավելին ծախսես, վերադարձիս ճանապարհին կվճարեմ աշխատանքիդ համար:

Պատմությունն ավարտելուց հետո Հիսուսն ասաց.

- Ընկերը նա է, ով քո սիրո և օգնության կարիքն ունի, ընկերը նա է, ով սիրում և օգնում է քեզ:

Ասացվածքներ

Ընկերոջը վտանգի մեջ են ճանաչում:

Ճապոնական

Բնապահպանություն

Մարդիկ գոյություն ունեն մեկը մյուսի համար:

Սիրելի՛ Գիպրոնիկ, սա՛, խնդրում եմ, ի՞նչ է նշանակում իզևանել բառը:

Ինչուիկ զան, վեպ հեղինակող բառը կազմվել է իզևան-ից: Սա նշանակում է «ճանապարհին կառուցված ջինություն, որ նախատեսված է գիշերելու կամ հանգստանալու համար»: Այսինքն՝ իզևանը ժամանակակից հյուրանոցի նման բան էր:

Ուրեմն իզևանել բառն էլ կնշանակի «գիշերելու կամ հանգստանալու համար ճանապարհին որևէ տեղ կանգ առնել, մնալ»: Պարզ է, որ իզևանատերն էլ իզևանի տերն է:

Գիպրեվ, իզևան բառից է առաջացել Մավուլի մարզի կենտրոնի՝ իզևանի անունը:

Բառերի գանձատուփ

1. Գրիր գուշակել, առկայծել, խնամել բառերի հոմանիշները։
2. Գրիր մոտենալ, թուլանալ, ավարտել բառերի հականիշները։
3. Լավանալ բառն այս տեքստում ինչ իմաստով է գործածվել։
4. Ջուր և հույս արմատներով բառեր կազմիր։

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Պատմությունը պատմիր քո բառերով։
2. Օտարականն ինչպե՞ս օգնեց վիրավոր ճամփորդին։
3. Քո կարծիքով օտարականն ինչու՞ օգնեց վիրավորին։
4. Ո՞րն է այս պատմության հիմնական միտքը։

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Որևէ մեկին երբևէ օգնել ես։ Պատմիր։
2. Պատմիր քո ամենալավ ընկերոջ մասին։

Լեզվաբանի դասը

Համեմատիր լավ, լավություն և լավատես բառերը։ Ինչ նկատեցիր։

Բառերի կազմությունը

Բառերն ըստ կազմության լինում են պարզ, բարդ և ածանցավոր։

Պարզ են միայն մեկ արմատից կազմված բառերը։ Օրինակ՝ մարդ, տուն, սեղան, ներկ, գույն, բույս։

Բարդ են երկու և ավելի արմատներից կազմված բառերը։ Օրինակ՝ տոմսարկղ, արևածաղիկ, վարդագույն, գրադարանավար։

Բարդ բառերի արմատները հաճախ միանում են ա հոդակապով։ Օրինակ՝ ջրափոս, գայլաձուկ, վիրակապ։

Ածանցավոր են այն բառերը, որոնք կազմված են մեկ արմատից և մեկ կամ երկու ածանցից։ Ածանցները արմատներին միանում են սկզբից կամ վերջից։ Օրինակ՝ անվախ, ուրախություն։

Նադեր Էբրահիմի

ՈՒՄ ՆՎԻՐԵՄ ԻՄ ՓՈՔՐԻԿ ՍԻՐՏԸ

Ես մի փոքրիկ, շատ փոքրիկ, շա՛տ-շա՛տ փոքրիկ սիրտ ունեմ։

Տատիկս ասում է. «Սիրտը չպետք է դատարկ մնա։ Դատարկ սիրտը դատարկ ծաղկամանի նման է և ցավ կարող է պատճառել մարդուն»։

Ահա թե ինչու երկար ժամանակ խորհում եմ, թե ու՛մ նվիրեմ իմ այս փոքրիկ սիրտը, ավելի ճիշտ՝ ու՛մ տեղավորեմ սրտիս մեջ։ Ինչպե՞ս ավելի ճիշտ բացատրեմ. ուզում եմ, որ իմ փոքրիկ սիրտը, որ գեղեցիկ ու կոկիկ տնակի նման մաքուր է, նվիրեմ մի մարդու, որին բոլորից շատ եմ սիրում։ Նրան, ով իսկապես արժանի կլինի իմ այս փոքրիկ ու մաքուր տան մեջ ապրելու։

Ճիշտ եմ ասում, չէ՞։

Հայրիկս ասում է. «Մարդու սիրտը հյուրանոց չէ, որ գան, երկու-երեք ժամ կամ երկու-երեք օր ապրեն ու գնան»։

Իսկապես, չգիտեմ, թե ի՛նչ բան է սիրտը։ Համոզված եմ, որ սիրտը բարի ու ազնիվ մարդկանց տեղն է, այն էլ՝ մշտակա՛ն տեղը։

Այո՛... Լավ մտածելուց հետո որոշեցի, որ սիրտս ամբողջովին, անմնացորդ մայրիկիս եմ նվիրելու։ Եվ այդպես էլ արեցի։

Երբ նայեցի, տեսա, որ թեև սիրելի մայրիկս հեշտ ու հանգիստ տեղավորվել էր, սակայն սրտիս կեսը դատարկ էր մնացել... Պարզ է. ես հենց սկզբից պետք է գլխի ընկնեի ու սիրտս միանգամից երկուսին՝ մայրիկիս ու հայրիկիս, նվիրեի։ Այդպես էլ արեցի։

Հետո գիտե՞ք՝ ի՛նչ պատահեց. երբ նայեցի, տեսա, որ սրտումս դեռ ահագին տեղ է մնացել։

Եվ սրտիս դատարկ անկյունն անմիջապես նվիրեցի ինձ հարազատ, շա՛տ հարազատ մի քանի հոգու՝ մեծ եղբորս, փոքր քրոջս, պապիկիս ու տատիկիս, նաև իմ լավ ու բարի քեռուն ու հորեղբորը...

Մտածեցի՝ հիմա այնտեղ ա՛յ թե իրարանցում կլինի... Այդքան մարդ ինչպե՞ս է տեղավորվելու այդ փոքրիկ սրտում:

Աստվա՛ծ իմ, նայեմ ու ի՞նչ տեսնեմ. նրանք բոլորը միասին սրտիս ընդամենը կեսն էին զբաղեցրել, ուղիղ կեսը: Հանգիստ տեղավորվել էին, զրուցում էին, ծիծաղում... Ի՞նչ նեղվածք, ի՞նչ բան... Սրտումս դեռ մի աշխարհ տեղ էր մնում...

«Լավ,- մտածում եմ,- հիմա ու՞մ հերթն է...»:

Եվ սրտիս դատարկ մնացած մասը սիրով նվիրեցի մեր թաղի բոլոր ազնիվ մարդկանց, իմ լավ ու բարի բարեկամներին ու հարազատներին, ընկերներին, ինչպես նաև այն բոլոր ուսուցիչներին, որոնք երեխաներին սիրում են ...

Մեր մեջ ասած՝ հայրիկս մի հարուստ հորեղբայր ունի, շա՛տ հարուստ հորեղբայր: Մտածեցի. քանի որ բոլոր լավ մարդկանց տեղավորել եմ սրտիս մեջ, հորս հորեղբորն էլ մի անկյունում տեղ տամ: Բայց նա չտեղավորվեց: Ինչքան չարչարվեցի, անօգուտ: Բայց ես ի՞նչ կարող էի անել: Ես մեղք չունեի: Մեղավորը հաստատ ինքն էր: Ասենք, երբ ինքը մի կերպ ներս էր խցկվում, դրսում էին մնում նրա փողի հսկայական սնդուկները: Եվ նա հևիհև դուրս էր վազում փողի հետևից...

Կամաց–կամաց հասկանում էի, թե մի փոքրիկ, շատ փոքրիկ սիրտն իրականում որքա՛ն մեծ կարող է լինել...

Մի գիշեր, երբ վերհիշեցի մեծ պատերազմի ծանր ու դժվարին

օրերը, լաց եղա ու բարձրաձայն գոռացի. «Սրտիս մնացած մասը նվիրում եմ բոլոր այն հերոսներին, որոնք նենգ թշնամուն դուրս վռնդեցին մեր հողից»:

Հրաշալի՜ է:

Հիմա իմ սիրտը մեծ ու հսկա մի քաղաքի նման արդեն դպրոց ունի, հիվանդանոց, զորանոց, փողոցներ ու թաղեր...

Հիմա սրտումս ընդամենը մի շատ փոքրիկ տեղ է մնացել: Եվ գիտեք, թե ու՛մ համար եմ պահել... Ճի՛շտ կռահեցիք. պահել եմ բոլոր չար ու վատ մարդկանց համար: Այո՛: Սակայն պայմանով, որ նրանք փոխվեն. երեխաներին չնեղացնեն, ծովերը չաղտոտեն, կենդանիներին չոչնչացնեն և առհասարակ ոչ մեկին վատություն չանեն... Միայն այդ դեպքում նրանք կդառնան իմ սրտի բնակիչները:

Այդպես է, չէ՞: «Անգամ եթե բոլոր այդ մարդիկ բարիանան ու սիրտս մտնեն,- մտածում եմ ես,- միևնույն է, սրտումս դեռ էլի մի քիչ տեղ կմնա... Գուցե անտառների համար, լեռների, թռչունների, ձկների, եղնիկների ու էլի շատ ու շատ բաների համար...»:

Իսկապես որ զարմանալի բան է. չե՛ս հասկանում՝ սա սի՞րտ է, թե՞ անծայրածիր օվկիանոս...

Ախր այս փոքրիկ սիրտն ինչպե՞ս չի լցվում...

Գուցե հասկանամ, երբ մեծանամ: Բայց հիմա, քանի դեռ սրտումս տեղ կա, սիրտս պիտի նվիրեմ բոլո՜ր-բոլո՜ր լավ ու բարի մարդկանց: Սիրտը հենց դրա՛ համար է: Մի՞թե այդպես չէ...

Պարսկերենից թարգմանեց **Գևորգ Ասատրյանը**

ընդամենը նեղվածք անօգուտ խցկվել հևիհև աղտոտել օվկիանոս

Բմաստեղծություններ

Մեծ սիրտը, ինչպես օվկիանոսը, երբեք չի սառչում:

Մարդիկ ամենից շատ արժանի են սիրո:

Լավ մարդը միաժամանակ ապրում է հազար ու մի տեղ, հազարավոր սրտերում:

Բառերի գանձատուփ

1. *Պատմվածքում գտիր խորհել, գոչել, բնակվել, տանջվել, գուշակել, կեղտոտել բառերի հոմանիշները (դրանք կապույտ են գրված):*

2. *Գրիր ազնիվ, մշտական, դատարկ, մեղավոր բառերի հականիշները:*

3. *Հևալ նշանակում է «ընդհատումներով արագ-արագ շնչել, շունչը կտրվել»: Ի՞նչ է նշանակում հևիհև:*

4. ա) *Բարեկամ նշանակում է՝ 1) «լավ, բարի վերաբերմունք ունեցող», 2) «ազգական», իսկ հարազատ նշանակում է՝ 1) «արյունակից, ազգական», 2) «մտերիմ, սիրելի, թանկագին»: Ո՞ր իմաստն է ընդհանուր:*

բ) *Հարազատ բառը ո՞ր իմաստով է գործածվել Սրտիս դատարկ անկյունը նվիրեցի ինձ հարազատ, շա՛տ հարազատ մարդկանց նախադասության մեջ: Փորձիր փոխարինել հոմանիշ բառով:*

գ) *Հարազատ բառով 2-3 բառակապակցությունն կազմիր:*

5. *Ծաղկման բառի արմատներից յուրաքանչյուրով 1-ական ածանցավոր և բարդ բառ կազմիր:*

6. *Թռչունների և ձկների երեքական անունով լրացրու աղյուսակը:*

թռչուն	ձուկ





Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Հեղինակն ինչերի՞ հետ է համեմատում սիրտը: Դու՞ ինչի հետ կհամեմատեիր այն:*

2. *Թվարկի՛ր, թե տղան իր սրտում ու՛մ տեղ տվեց:*

3. *Գրի՛ր հայր, մայր, հորեղբայր, հորաքույր, կին, ընկեր բառերի ու՞մ հարցին պատասխանող ձևերը:*

Նմուշ՝ եղբայր – (ու՞մ) եղբոր:

4. *Տեսնել - տեսա, տեսար, տեսավ շարքի նմանությամբ գրի՛ր մտնել և իջնել բառերի շարքերը:*

5. *Շարունակի՛ր և նախադասություններ կազմիր.*

ա) *Իմ կարծիքով.....:* **բ)** *Համոզված եմ.....:*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Ո՞վ արդեն տեղ ունի, և ու՞մ կուզեիր տեղ տալ քո սրտում:*

2. *Պատրաստ ես սրտիդ մեջ չար և վատ մարդկանց էլ տեղ տալու: Ի՞նչ պայմանով տեղ կտաս նրանց:*

Լսի՛ր նաև ընկերներիդ կարծիքը:

Իմաստունի խորհուրդները

Սիրի՛ր քո մտերիմներին ու հարազատներին: Հարգի՛ր ուրիշներին, որպեսզի նրանք էլ քեզ հարգեն:

Ուշադիր և հոգատա՛ր եղիր քեզ շրջապատող մարդկանց նկատմամբ, օգնի՛ր նրանց, ինչով կարող ես:

Ուրիշների հետ վարվի՛ր այնպես, ինչպես կուզես, որ նրանք վարվեն քեզ հետ:

Դադարի պահ

Բառաշղթայից առանձնացրու՛ 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ, 15-րդ և 17-րդ տառերը և բա՛ռ կազմիր:

ընկերտատկինպապիկքեռի

Հովհաննես Շիրազ

ՀԱՅՐՍ

Երբ դաշտերում Շիրակի
Առավոտն էր արթնանում,
Մայրս ամեն կիրակի
Ինձ մեր բոստանն էր տանում:

Հայրս մի գառ էր առել,
Ճերմակ մի գառ ինձ համար,
Ու ես մի թուխ գառ դարձել՝
Խաղում էինք անդադար:

Երբ հայրիկս մեզ բռնում,
Ինձ մի թևին էր առնում,
Մյուս թևին՝ գառնուկիս,
Կյանքս դրախտ էր դառնում:

Արածում էր գառնուկս
Եվ դառնում էր ինձ պահակ,
Երբ ես՝ հոգնած մանուկս,
Քնում էի կաղնու տակ:

Հովն էլ անուշ մայրիկիս
Նուշ համբույրն էր ինձ բերում,
Թե՞ մորուքն էր հայրիկիս
Ինձ քնած տեղս համբուրում:

Թիթեռների մեջ թիթեռ,
Ծաղիկների մեջ՝ ծաղիկ,
Ի՞նչ անուշ էր կյանքս դեռ՝
Անհոգ, լուսե, խաղաղիկ:

Օրինանքներ

Հորով, մորով լինես:

Աստված պահի քեզ:

Ծլես, ծաղկես, զորանաս:

Բառերի գանձատուփ

1. *Հով նշանակում է «թեթև քամի, հովիկ» և «զով, սառը»: Բառը ո՞ր իմաստով է գործածվել բանաստեղծության մեջ:*

2. *Գրի՛ր մանուկ, անդադար, անուշ, ձերմակ բառերի հոմանիշները:*

3. *Գրի՛ր արթնանալ, տանել և հոգնել բառերի հականիշները:*

4. ա) *Համեմատի՛ր համբույր և համբուրել բառերը: Ի՞նչ նկատեցիր:*

բ) *Գույն, լույս, բույս արմատներին վերջից բաղադրիչներ ավելացրու և նոր բառեր կազմիր:*

5. *Գառնուկ և հայրիկ բառերից առանձնացրու՛ ածանցները: Դրանցով ուրի՛շ բառեր կազմիր:*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Քո բառերով պատմի՛ր բանաստեղծությունը:*

2. *Հեղինակն ի՞նչ բառերով է նկարագրում իր կյանքը մանուկ տարիներին:*

3. *Բանաստեղծն ի՞նչ էր զգում իր հոր կողքին:*

4. ա) *Կաղնի, կաղնու, կաղնուց ձևերի նմանությամբ գրի՛ր ուռենի, եղևնի, բալենի բառերի համապատասխան ձևերը:*

բ) *Որևէ շարքից երկու բա՛ռ ընտրիր և գործածի՛ր նախադասությունների մեջ:*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Պատմի՛ր քո կյանքի ամենաերջանիկ օրվա մասին:*

2. *Հայրիկիդ գրավոր պատմի՛ր քո ամենաթանկ երազանքի մասին:*

Բանաստեղծության մեջ գրված է՝ Առավոտն է արթնանում: Մի՞թե այդպիսի բան հնարավոր է, դու ի՞նչ ես հասկանում:

Լեզվաբանի դասը

Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ

Յուրաքանչյուր բառ իր իմաստն ունի: Օրինակ՝ թռչել նշանակում է «օդում թևերը թափահարելով մի տեղից մի ուրիշ տեղ փոխադրվել»: Սա թռչել բառի սովորական կամ ուղիղ իմաստն է:

Խոսքում բառերը հաճախ գործածվում են ոչ սովորական իմաստով: Օրինակ՝ Ժամանակը շատ արագ է թռչում: Ժամանակը թռչել չի կարող. ժամանակը կարող է շատ արագ անցնել: Ուրեմն թռչել բառն այս նախադասության մեջ գործածվել է «արագ անցնել» իմաստով, որը նրա ոչ սովորական՝ փոխաբերական իմաստն է:

Այդպես էլ ոսկի բառի ուղիղ իմաստն է «դեղին գույնի թանկարժեք մետաղ»: Օրինակ՝ Ագահ մարդը ոսկի շատ էր սիրում: Իսկ փոխաբերական իմաստը՝ «լավ, բարի, ազնիվ», օրինակ՝ ոսկի բնավորություն, ոսկի մարդ:

Դադարի պահ

Բառաշարքից առանձնացրու՛ բառերը և ըստ գույների որոշի՛ր, թե ինչը որտեղ է աճում:

խաղողգազարցորենվարունգսալորգարիդեղձսոխծիրանպղպեղ
կեռասվարսակդդմիկտարեկանկաղամբընկույզլոբիխնձորբողկնուռ

արտ	այգի	բանջարանոց

Դիանա Ուկլեբա-Գրիգորյան

ՄՈՐ ԺՊԻՏԸ

Մայրակա՛ն ժպիտ, դու քնքուշ ու լուռ
Եվ փափուկ, ինչպես աղավնու փետուր,
Դու երկնքի պես աստղալից ու խոր
Եվ արևի պես տաք ու լուսավոր։

Ես օրորոցում քո շողն զգացի
Եվ զանգակի պես ուրախ զնգացի,
«Մայրիկ» կանչեցի մայրենի լեզվով,
Եվ իմ աշխարհը սկսվեց քեզնով։

Իմ մանկությունից մնացել է ինձ,
Մա՛յր, քո ժպիտը լույսի պես թովիչ,
Եվ բոժոժների զնգոցով նորից
Քո երգը հավետ ուղեկցում է ինձ։

Ռուսերենից թարգմանեց
Նանսեն Միքայելյանը

օրորոց
ուղեկցել

Հանելուկ

Այն ո՞ր պահն է տվյալ օրվա,
Երբ մայրիկն է քեզ օրորում,
Տաք վերմակով քնքուշ ծածկում,
Ջերմ համբույրով քեզ քուն բերում։

Ասույթներ

Մոր սիրտը մարդկության սիրտն է, տիեզերքի սիրտը։
Ավ. Իսահակյան

Կա մի գեղեցիկ էակ, որին միշտ պարտք ենք. դա մայրն է։
Օստրովսկի (ռուս գրող)

Բառերի գանձատուփ

1. *Բանաստեղծն ինչ բառերով է բնութագրում մոր ժպիտը:*

2. *Համեմատիր գեղեցիկ ժպիտ և լուսավոր ժպիտ բառակապակցությունները: Ո՞ր բառն է գործածվել փոխաբերական իմաստով: Այդ բառի ուղիղ իմաստով բառակապակցությունն կազմիր:*

3. *Գրիր քնքուշ, լուռ, շող, ուրախ, հավետ բառերի հոմանիշները, դրանք գործածիր առանձին նախադասությունների մեջ:*

4. *Աստղազարդ բառի հոմանիշը գտիր բանաստեղծության մեջ:*

5. *Ինչպիսին կարող են լինել երկինքը, սիրտը. յուրաքանչյուրի կողքին համապատասխան բառ դիր:*

Նմուշ՝ ծով - ալեկոծ ծով, անծայրածիր ծով, փոթորկոտ ծով:

6. *Թովիչ բառի հոմանիշներն են գրավիչ, հմայիչ, կախարդական բառերը: Դրանցից մեկը գործածիր նախադասության մեջ:*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Բանաստեղծության մեջ մայրական ժպիտն ինչերի՞ հետ է համեմատվում: Իսկ դո՞ւ ինչի հետ կհամեմատեիր:*

2. *Ի՞նչ ես զգում, երբ մայրիկդ ժպտում է:*

3. *Բանաստեղծությունից ինչպիսի՞ հարցին պատասխանող 5 բառ դուրս գրիր և դրանցով բառակապակցութուններ կազմիր:*

4. *Աղավնի, աղավնու, աղավնուց ձևերի նմանությամբ գրիր որդի, այգի, ոսկի բառերի համապատասխան ձևերը:*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Նկարագրիր քո մայրիկին:*

2. *Ձերմ նամակ գրիր մայրիկիդ և նրան հաղորդիր այն, ինչը մինչև հիմա բարձրաձայն չես ասել:*

Բոժոժ բառն այստեղ նշանակում է «զանգակ, զանգուլակ»: Հետաքրքրվիր, թե ուրիշ ինչ բոժոժ է լինում:

ՄՈՐ ՆԱՄԱԿԸ

Որդի՛ս, ես համոզված եմ, որ քո ընկերները երբեք այնպես չեն պատասխանի իրենց հորը, ինչպես դու՝ այսօր երեկոյան:

Էնրի՛կո, ինչպե՞ս կարողացար այդ անել:

Դու պետք է խոստանաս ինձ, որ այդ բանը երբեք չի կրկնվի:

Ամեն անգամ, երբ ի պատասխան հորդ արած դիտողության, մի կոպիտ բառ է ուզում դուրս թռչել քո բերանից, խորհի՛ր այն մասին, որ մի օր զղջալու ես դրա համար:

Հետո դու կհասկանաս, որ հայրդ միշտ ամենալավ ընկերն է եղել քեզ համար, ու երբ ստիպված է եղել պատժել քեզ, դրանից նա ավելի է տանջվել, քան դու ինքդ: Իսկ եթե երբեմն էլ քեզ ստիպել է լաց լինել, ապա քո բարին կամենալով:

Նա հաճախ է փնտրում քո մտերմությունը, որովհետև քեզ հետ է ուզում լինել այն պահերին, երբ սիրտը ծանրացած է, երբ անախորժություն է պատահում իրեն, ինչպես բոլոր մարդկանց. քո մեջ ընկեր է փնտրում, որպեսզի սփոփվի ու հոգսը մոռացության տա: Այդ ժամանակ նրան հարկավոր է քո սերը՝ հոգու պայծառությունն ու արիությունը վերագտնելու համար:

Մտածի՛ր, թե ինչպիսի ցավ ես պատճառում նրան, երբ փոխադարձ սիրո փոխարեն նա քո մեջ տեսնում է անտարբերություն ու կոպտություն:

Այլևս նման սոսկալի երախտամոռություն ցույց չտաս, որդի՛ս:

Մտածի՛ր. որքան էլ ջանաս, միևնույն

է, չես կարող փոխհատուցել այն, ինչ նա արել է ու շարունակում է անել քեզ համար։

Գնա՛, տղա՛ս, գնա՛ հորդ մոտ, նա կողքի սենյակում նստած աշխատում է։ Ոտքերիդ ծայրերի վրա մոտեցիր նրան, որպեսզի չլսի ներս մտնելուդ ձայնը, գլուխդ դի՛ր նրա ծնկներին ու ներողությո՛ւն խնդրիր։

Քո մայր

Իմաստախոսություններ

Ծնողի խստությունը բուժիչ դեղ է. նրա մեջ ավելի շատ քաղցրություն կա, քան դառնություն։

Մոր սիրտը մի անդունդ է, որի խորքում միշտ էլ ներում կգտնվի։

Առած

Խրատը դեղի նման է. որքան դառը, այնքան բուժիչ։

Բառերի գանձատուփ

1. *Նամակում գտի՛ր նկատողություն, հարկադրել, ցանկանալ, մխիթարվել, սարսափելի, վստահ, ապերախտություն բառերի հոմանիշները. դրանք կապույտ են գրված։*

2. *Գրի՛ր երբեք, հաճախ, մոռացության տալ, մոտենալ, ծանրանալ բառերի հականիշները։*

3. *Բաց թողնված տեղերում փոխհատուցել, մտերմություն, ջանալ, անախորժություն բառերից ո՞րը պետք է լինի։*

ա) *..... բառը նշանակում է «մի բանի համար ճիգ ու ջանք գործադրել»։*

բ) *Երբ մեկի կյանքում անհաջողություն կամ տհաճ դեպք է լինում, ասում են՝ ..... է պատահել։*

գ) *Մեկի հետ ջերմ բարեկամություն անելը ..... է կոչվում։*

դ) *Կյանքում միշտ չէ, որ հաջողվում է մեկի լավության տակից դուրս գալ, նրա արածին լավությամբ պատասխանել, այսինքն՝ .....։*

4. *Տանջվել նշանակում է «շատ աշխատել, չարչարվել» և «հուզվել, անհանգստանալ, մտածմունքի մեջ ընկնել»։ Բառը ո՞ր իմաստով է գործածվել Երբ ստիպված է եղել պատժել քեզ, դրանից նա ավելի է տանջվել, քան դու ինքդ նախադասության մեջ։*

5. *Կոպիտ նշանակում է «կոշտ», «անկիրթ», «վիրավորական»: Բառը ո՞ր իմաստով է գործածվել կոպիտ բառ արտահայտության մեջ:*

6. *Ի՞նչ բառեր և արտահայտություններ գիտես, որոնցով կարելի է ներում խնդրել:*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Ո՞րն է նամակի հիմնական միտքը: Մայրը որդուն ի՞նչ է խրատում:*

2. *Մայրն ինչպե՞ս է բնութագրում հորը:*

3. *Մոր կարծիքով հայրն ինչու՞ է փնտրում որդու մտերմությունը:*

4. *Նամակի ո՞ր հատվածը ամենից շատ դուր եկավ քեզ: Ինչու՞:*

5. *Մտածել-մտածի՛ր, գնալ-գնա՛ ձևերի նմանությամբ կազմի՛ր խնդրել, նստել, մնալ, լողալ բառերի համապատասխան ձևերը:*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Հայրիկիդ երբևէ օգնել ես նրա համար ծանր պահերին: Պատմի՛ր:*

2. *Նամակով հայրիկից կամ մայրիկից ներողությու՛ն խնդրիր քո գործած որևէ սխալ արարքի համար:*

Փորձի՛ ինչուիր

«Մոր նամակում» ի պատասխան արտահայտությունն ինչ կարմայրեց: Հետո բառարանում գտա բացատրությունը՝ «որպես պատասխան»:

Պարզվում է, որ նման բազմաթիվ արտահայտություններ կան: Նշյալես, ի նշան հարգանքի՝ «որպես հարգանքի նշան», ի լուր բոլորի՝ «որպեսզի բոլորն իմանան», ի վիճակի լինել՝ «ուժ, հնարավորություն ունենալ»:

Հետաքրքիր է, չէ՞. բառարանում մի բառ ես փնտրում, բայց տես, թե քանիսն ես սովորում:

Ինչուիկ



Սիլվա Կապուտիկյան

ՏՂԱՅԻՍ

Դու չես սովորում գերազանց, տղա՛ս,
Գովասանագրեր դու տուն չես բերում,
Եվ ծնողական ձեր ժողովներում
Բարի նախանձով չեն նայում վրաս։

Նեղում ես տատիդ, հոգու հետ խաղում,
Ուշքդ օրերով գնդակին տալիս.
Եվ հարևանի կինը սրտնեղում,
Աղմուկիդ համար գանգատ է գալիս։

Տեսնու՜մ եմ անշուշտ... Բայց երբ խնամքով
Ծածկում ես թախտին ննջած տատիկին,
Երբ վշտիս պահին դու աչքի տակով
Հետևում ես իմ խոսուն հայացքին,-

Երբ տան մրգերից բաժին ես տանում
Մեր դռնապանի փոքրիկ տղային,
Բակում կռվելիս պաշտպան ես կանգնում
Ուժեղի ձեռքից տուժած տկարին,-

Տեսնու՜մ եմ, տղա՛ս, տեսնու՜մ եմ խորքից,
Որ այդ խորդուբորդ քո կեղևի տակ
Կան հանքեր հարուստ ու ոսկու երակ,
Բխում է խորքում մի զուլալ հոգի...

Գուցե չես փայլի դիրքով ու ձիրքով,
Աստղ չես դառնա ոչ մի երկնքում,
Բայց բացվի՛ր, զտվի՛ր ու փայլի՛ր հոգով,
Մարդուն ջերմացրու՛ լույսով քո մաքուր։

Մա՛րդ եղիր, որդի՛ս, մա՛րդ մնա կյանքում...

Բմաստախոսություն

Գիտելիքները մարդուն կշիռ են տալիս, իսկ արարքները՝ փայլ։

Բառերի գանձատուփ

1. Աջ կողմից գտիր ձախ սյունակում գրվածների հոմանիշները:

զտվել	հորդել, ցայտել
բխել	նիրհել, քնել
ննջել	շողալ, ցոլալ
նեղել	մաքրվել, պարզվել
փայլել	անհանգստացնել, տանջել

2. Տկար և վձիտ բառի մեկական հոմանիշ և հականիշ գրիր:

3. Զրնգալ, կարկաչել, շողշողալ, փայլփլել բառերի արմատներով և խոսուն բառի ածանցով բառեր կազմիր:

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Որդու ո՞ր լավ արարքներն են ուրախացնում մորը:

2. Մարդու ո՞ր հատկանիշներն ես ամենից բարձր գնահատում:

3. Ո՞րն է բանաստեղծության հիմնական միտքը: Մայրն ինչ խորհուրդ է տալիս որդուն:

4. Շարունակի՛ր շարքը՝ գովասանագիր - գովասանագրեր, ձեռագիր - ....., օրագիր -....., հեռագիր - ....., պատվոգիր - .....:

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. «Ինչպիսի՞ն կուզեմ լինել» վերնագրով շարադրությունն գրիր:

2. Պատմի՛ր քո ճանաչած ազնիվ մարդկանցից մեկի մասին:

Բանաստեղծության մեջ գտիր թաքուն և պաշտպանել բառերի իմաստն արտահայտող բառակապակցությունները:

Երակները մարդու մարմնի այն անոթներն են, որոնք արյունը հասցնում են սրտին: Բայց ոսկու երակ...

Ոսկու երակ են կոչում հանքափարի այն բարակ շերտը, որից ոսկի են ստանում: Պարզ է, չէ՞, որ դա խիստ թանկարժեք շերտ է:

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՀՈՂԱԳՈՐԾԸ

Գարնանային արևոտ մի օր, երբ թագավորն իր շքախմբով որսի էր գնում, տեսավ, որ զառամյալ մի ծերունի ընկուզենի է տնկում առվի ափին: Նրա կնճռապատ ճակատը ողողված էր քրտինքի կաթիլներով, որոնք գոհարների պես շողշողում էին արևի տակ:

Թագավորը սանձահարեց իր նժույգը, ողջունեց ծերունուն ու ասաց.

- Բարի՛ հայրիկ, ի՞նչն է քեզ ստիպում այդպես չարչարվել ու քրտինք թափել: Չէ՞ որ ընկուզենին շատ ուշ է պտուղներ տալիս, և դու դժվար թե նրա պտուղները վայելես:

- Տեր արքա,- ասաց ծերունին,- եթե քո թագավոր հայրը քեզ ժառանգություն չթողներ իր գահը՝ ոսկով ու ակնեղենով, դու ինչպե՞ս կարող էիր մի ամբողջ երկիր կառավարել:

Հայրենի ծառն ու այգին էլ հողագործի գանձերն են: Մեր պապերը ծառեր են տնկել, որոնց պտուղը վայելում ենք:



Մենք էլ նույնը պիտի անենք մեր զավակների ու թոռների համար։

- Կեցցե՛ս, իմաստու՛ն ծերուկ,- ասաց թագավորը և դառնալով վեզիրին՝ հրամայեց, որ գեղջուկին տասը ոսկի պարգևի։

Ծերունին ոսկիները վերցրեց, շնորհակալություն հայտնեց թագավորին և ապա դառնալով դեպի նոր տնկած ծառը՝ մրմնջաց.

- Գոհ եմ քեզնից, իմ փոքրիկ ընկուզենի, թող քո պտուղն անսպառ լինի, կյանքդ՝ երկար։

- Ինձ օրհնելու փոխարեն ծառի՞ն ես օրհնում, ծերու՛կ,- ասաց թագավորը։

- Ախր սա ինձ բարիք տվեց ոչ թե հինգ կամ տասը տարի հետո, այլ հենց հիմա,- պատասխանեց ծերունին։

զառամյալ
կեցցե՛, կեցցե՛ս
գեղջուկ
շնորհակալություն
ընկուզենի

Առած-ասացվածքներ

Աշխատանքը առաքինությունների աղբյուր է։

Քրտինքն աշխատանքի արցունքն է։

Իմաստախոսություն

Ով շատ է աշխատում, երջանկությունը նրան է բաժին ընկնում։

Բառերի գանձատուփ

1. *Օրհնել նշանակում է «աղոթքով մեկին բարին ցանկանալ՝ մաղթել» և «մեկի անունը շնորհակալությամբ հիշել, նրան գովել»։ Բառը ո՞ր իմաստով է գործածվել այս պատմության մեջ։*

2. *Ծքախումբ, զառամյալ, սանձահարել, անսպառ բառերը դի՛ր համապատասխան իմաստների կողքին.*

- *անվերջ, չվերջացող, չսպառվող,*
- *սանձը քաշել, իրեն ենթարկել, զսպել,*
- *շատ ծերացած, ծեր,*
- *թագավորին կամ բարձր պաշտոնյային ուղեկցող զինված մարդկանց խումբ։*

3. Գրի՛ր ողջունել, պարգևել, չարչարվել բառերի հոմանիշները։

4. Գրի՛ր դժվար, գոհ, ուշ, երկար բառերի հականիշները։

5. Ակնեղեն նշանակում է «թանկարժեք քարեր և նրանցից պատրաստված զարդեր»։ Ինչպե՞ս կբացատրես ոսկեղեն, արծաթեղեն բառերը։

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Թագավորն ինչու՞ գովեց ծերունուն և տասը ոսկի տվեց նրան։

2. Ծերունին ի՞նչն էր համարում ամենակարևոր գանձը, ինչի՞ն էր տեղ տվել իր սրտում։

3. Ի՞նչ ես կարծում, ծերունին միայն թագավորի տված ոսկու՞ համար շնորհակալություն հայտնեց ծառին։

4. Թագավորը ծերունուն քաջալերեց կեցցե՛ս բառով։ Խրախուսանքի ուրիշ ի՞նչ բառեր ու արտահայտություններ գիտես։

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Ընկուզենու և ընկույզի մասին տեղեկություններ հավաքիր և հաղորդի՛ր ընկերներիդ։

2. «Բարի գործի պտուղները» վերնագրով շարադրությու՛ն գրիր։

Դադարի պահ

Այս նկարներն ի՞նչ մասնագիտություն կամ զբաղմունք են հուշում քեզ։

Համո Սահյան

ՊԱՊԸ

Իմ պապը տնկել է
Մեր գյուղի շիվերը,
Իմ պապը պայտել է
Մեր գյուղի ձիերը։
Ջրել է իր այգին
Ու մարգը բահել է
Եվ արդար քրտինքով
Իր տունը պահել է։
Իմ պապը վարել է,
Իմ պապը ցանել է,
Իսկ հնձի ժամանակ
Ձեռքի մեջ մանգաղի
Դաստակը ցավել է։

արդար
խորհել
արտասվել

Իմ պապը հողի հետ
Խորհել ու խոսել է,
Ամպի հետ արտասվել,
Ջրի հետ հոսել է...
Մի օր էլ, երբ հանկարծ
Ծալվել են ծնկները,
Զարմանքից քարացել,
Ամոթից շիկնել է։
Թողել է նա մաճը
Եվ շունչը պահել է,
Եվ հետո քրտինքը
Ճակատին պաղել է։
Եվ պապը ակոսում
Պառկել ու քնել է,
Խառնվել այն հողին,
Որ իրեն սնել է։

Բառերի գանձատուփ

1. *Զարմանքից քարացել, ամոթից շիկնել է արտահայտություններից եզրակացրու, թե ինչ են նշանակում քարանալ և շիկնել բառերը: Դրանք գործածիր նախադասությունների մեջ:*

2. *Ինչ կապ ես տեսնում պաղել և պաղպաղակ բառերի միջև:*

3. **ա)** *Կարդա՛ իմաստով մոտ այս բառերի շարքերը.*

մտածել - մտորել, խորհել, մտմտալ, կշռադատել,

լալ - արտասվել, հեկեկալ, հեծկլտալ, ողբալ:

բ) *Յուրաքանչյուր շարքից առանձնացրու այն բառը, որ գործածվել է բանաստեղծության մեջ:*

գ) *Հոմանիշների յուրաքանչյուր շարքից մեկ բա՛ռ առանձնացրու և գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:*

4. *Պայտ-ը կենդանու սմբակի ձևով ու չափով պատրաստված տափակ երկաթն է, որ մեխում են ձիու կամ էշի ոտքերին: Այս բառից կազմվել է պայտել, որ նշանակում է «պայտ խփել»: Ինչպե՞ս են կազմվել տնկել, բահել, ցավել, շիկնել բառերը:*

5. *Բանաստեղծը քրտինք-ը բնորոշել է արդար բառով՝ արդար քրտինք: Ինչպե՞ս կբնորոշես ձին, հողը:*

Սիրելի՛ ինչուիկ

Գրեթե համոզված եմ, որ քեզ անծանոթ է մաճ բառը: Ուզում եմ պարզաբանել: Մաճը հողագործական մի հին գործիքի՝ գութանի կոթն է, որը բռնած վար է արել գյուղացին:

Այսօր գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ արդիական մեքենաներ և գործիքներ են կիրառվում, բայց հնացած առարկաների անվանումները, ինչպես տեսնում ես, նույնպես կարող են գործածվել:

Քո ընկեր Գիտունիկ

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Նկարագիր պապին, ինչպիսին է նա քո երևակայության մեջ և նկարում:*

2. *Բնութագրիր պապին, ասածներդ հիմնավորիր բանաստեղծության համապատասխան տողերի միջոցով:*

3. *Փորձիր կռահել, թե պապն ամոթից ինչո՞ւ է կարմրել:*

4. *Բացատրիր բանաստեղծության վերջին երեք տողը:*

5. *Պապիկդ ինչ բառերով է գովում քեզ կամ իր սերն արտահայտում: Ուրիշ ինչպիսի՞ յուրահատուկ բառեր և արտահայտություններ է գործածում քո պապիկը:*

6. *Գրիր հնձի, բրդից, գծով, տնից, լճի, սրտով, շնից բառերի ուղիղ (ինչ հարցին պատասխանող) ձևերը:*

Նմուշ՝ ջրի - ջուր, գնով - գին:

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Պատմիր քո պապի մասին:*

2. *Դու ձեր ընտանիքի գործերին մասնակցու՞մ ես: Ի՞նչ ես կարողանում անել. պատմիր:*

Փորձիր բացատրել, թե իմաստային ինչ տարբերություն ունեն արտասվել և ողբալ հոմանիշները:

Իմաստունի խորհուրդները

Սիրիր աշխատանքը. այն բոլոր բարիքների մայրն է:

Աշխատելիս միշտ համառ եղիր, մի՛ նահանջիր դժվարությունների պատճառով և գործդ կիսատ մի՛ թող:

Գործդ հաճույքով կատարիր:

Միշտ բարի և լավ գործեր արա, և մարդիկ կսիրեն ու կգնահատեն քեզ:

ՇՆԻԿԸ

Նա ծնվեց մի նեղ ու կեղտոտ փողոցի անկյունում: Ընդամենը չորս տարեկան էր, երբ ծնողները լքեցին շնիկին, և նա այս մեծ աշխարհում մնաց միայնակ: Գնալով կյանքը դժվարանում էր: Ճոխ ռեստորանների ու մսի խանութների աղբամանները շրջապատված էին տարեց շների ոհմակներով: Ամենահամարձակները հափշտակում էին եղած-չեղածը, իսկ փոքրերն ու թույլերը բավարարվում էին մնացորդներով:

Ամեն երեկո շնիկը թափառում էր հին ու մռայլ փողոցներում ու նրբանցքներում, մտնում այգիներն ու պարտեզները: Մարդիկ նայում էին ու լուռ անցնում: Ոչ մեկը չէր օգնում կամ ուտելու որևէ բան տալիս: Մութն ընկնելուն պես թափառական շնիկը մտնում էր իր ստվարաթղթե տնակն ու քնում: Արևը ծագելուն պես ամեն ինչ սկսվում էր նորից:

Մի օր էլ շնիկն իր ծանոթ մայթեզրին տարօրինակ, բայց իր համար գեղեցիկ մի բան տեսավ: Հաստատ ուտելիք չէր: Փորձեց հարմարեցնել դնչիկին:

«Ինչ տարօրինակ է. ամեն ինչ մեծ ու գեղեցիկ է երևում»,- մտածեց շնիկը:

Տարօրինակ առարկան դնչիկին՝ շնիկը մտավ ծաղկավաճառի մոտ: Ծաղկավաճառը նայեց նրա ականջներին ու ժպտաց:

- Ինչ գեղեցիկ է կյանքը,- ուրախացավ շնիկն ու գնաց մտավ խաղալիքների խանութը: Հետո զբոսնեց քաղաքի մեծ զբոսայգում: Ակնոցի հետևից երկու խոշոր աչքեր նայում էին լողավազանում չարչարվող ձկներին: Նրանք, պատեպատ զարկվելով, ուզում էին ազատվել քարե ավազանի ճանկերից:

Ուրախացած շնիկը քայլում էր, երբ փողոցի մի անկյունից սրինգի հնչյուններ լսեց: Շնիկը դանդաղ մոտեցավ:

- Բարև՛, շնի՛կ,- ասաց երաժիշտը և ուրախ ավելացրեց,- ուրեմն դու ես գտել իմ ակնոցը: Առավոտյան ես այն կորցրի. գրպանիցս էր ընկել: Կվերադարձնեմ. առանց ակնոցի ես շատ եմ դժվարանում:

հափշտակել
կրբանցք
տարօրինակ
որևէ

- Ներեցեք, բայց չեմ կարող, որովհետև ակնոցը կյանքս փոխեց: Առաջ ամեն ինչ մռայլ էր ու տխուր, մարդիկ ինձ չէին սիրում, իսկ հիմա ուրիշ է:

Երաժիշտը լսեց նրան, ապա ասաց.

- Լսի՛ր, փոքրի՛կ, եթե դու մենակ ես աշխարհում և տխուր ես, արի՛ ընկերանանք: Ընկերությունը լավ բան է. ես հավատացած եմ, որ ընկերոջ հետ աշխարհը կսիրես առանց ակնոցի էլ:

Շնիկը մտածեց, հետո նայեց ծեր երաժիշտին.

- Դե ինչ, վերցրու՛ ակնոցդ,- ասաց ու դժվարությամբ բաժանվեց ակնոցից:

- Եկ, բարեկա՛մս, գնանք: Տանը մեզ են սպասում:

Այդ օրվանից շնիկը տխուր չէր, ապրում էր երջանիկ, որովհետև էլ մենակ չէր, գտել էր իր մեծ բարեկամին ու ընկերոջը, որը սիրեց ու գուրգուրեց նրան:

Ֆրանսերենից փոխադրեց
Հռիփսիմե Բշտիկյանը

Հանելուկ

Շատ նման է նա գայլի,
Բայց գայլի հետ չի քայլի,
Հավատարիմ ու արի
Բարեկամն է մեր բարի:

Բառերի գանձատուփ

1. *Կարդա՛ բառերի իմաստները: Բառերը ո՞ր իմաստով են գործածվել պատմվածքում:*

ա) *Հափշտակել - «ուժով, ճարպկությամբ խլել» և «գողանալ»:*

բ) *Լքել - «մեկին թողնել-հեռանալ, անօգնական թողնել» և «մի տեղից հեռանալ»:*

3. *Գրի՛ր խոշոր, լուռ, համարձակ բառերի հոմանիշները:*

4. *Գրի՛ր փոքր, թույլ, տխուր, ծանոթ բառերի հականիշները:*

5. *Պատեպատ նշանակում է «պատից պատ»: Մի բառով ինչպե՞ս կասես սարից սար, դռնից դուռ, տնից տուն:*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Որտե՞ղ էր ծնվել և որտե՞ղ էր ապրում շնիկը:*

2. *Ինչպիսի՞ կյանքով էր ապրում շնիկը մենակ մնալուց հետո:*

3. *Շնիկն արևայի՞ն ակնոց էր գտել, թե՞ օպտիկական:*

4. *Երաժիշտն ի՞նչ գործիք էր նվագում: Մի քանի ուրիշ գործիք էլ դու՛ թվարկիր:*

5. *Քո կարծիքով մարդիկ ինչու՞ սկսեցին ժպտալ շնիկին:*

6. *Քար (ինչ) - քարե (ինչպիսի՞) զույգի նմանությամբ արծաթ, ոսկի, փայտ, կավ բառերից հատկանիշ ցույց տվող բառե՛ր կազմիր:*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Շների կամ կատուների մասին զվարճալի որևէ պատմություն գիտե՞ս: Պատմի՛ր կամ ի՛նքդ հորինի՛ր:*

2. *Պատմի՛ր մարդու և կենդանու բարեկամության մասին:*

Դադարի պահ

ակնոց

ակնոցներ

ԾԱՌԻ ԽՆԴՐԱՆՔԸ

Մի՛ կոտրատիր իմ ճյուղերը,
Որդիներն են նրանք իմ հեզ,
Ես այնպես եմ սիրում նրանց,
Ինչպես մայրդ սիրում է քեզ։

Տերև անգամ եթե պոկես,
Սիրտս ցավից կմղկտա,
Թե որ դու ինձ չպահպանես,
Պատրաստի ծառ քեզ ո՞վ կտա։

Թող որ բերեմ քեզ հով ու զով,
Կեղտ ու փոշուց մաքրեմ օդը,
Կանաչ-կանաչ իմ ձեռքերով
Ցրեմ ամռան կիզիչ տոթը։

Ծիտ ու ծիծառ առնեմ ուսիս,
Օրոր ասեմ ես օրնիբուն,
Եվ քո կյանքի ճանապարհին
Մնամ որպես գեղեցկություն։

մղկտալ
տոթ
օրնիբուն

Հանելուկ

Ձմռանը տաքացնում է,
Գարնանն ուրախացնում է,
Ամռանը զովացնում է.
Աշնանը՝ կշտացնում։

Բառերի գանձատուփ

1. Գրիր հեզ, կիզիչ, օրնիբուն, տոթ բառերի հոմանիշները:
2. Գրիր մաքրել, ցրել, տալ, մնալ բառերի հականիշները:
3. Տերև անգամ եթե պոկես նախադասության մեջ անգամ բառը գործածվել է «մինչև անգամ» իմաստով: Մի հոմանիշ էլ դու՛ գրիր:

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ծառն իր ճյուղերը ու՞մ հետ է համեմատում:
2. Ծիծառ բանաստեղծական բառով հեղինակը ո՞ր թռչունին է անվանում:
3. Համեմատիր կոտրել և կոտրատել բառերը: Ի՞նչ տարբերություն ես տեսնում: Դրանց նման բառերի 2 զույգ էլ ինքդ գրիր:

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Ի՞նչ գիտես ծառերի տված օգուտի մասին: Պատմիր:
2. «Ծառի նամակը» վերնագրով շարադրանք գրիր:

Լեզվաբանի դասը

***Մայր* և *ճյուղ* բառերն ինչ ընդհանուր գծեր ունեն: Թվարկիր:**

Գոյական. անձ և իր ցույց տվող գոյականներ

Առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյականներ: Առարկա ասելով՝ հասկանում ենք մարդ, կենդանի, իր, երևույթ և այլն:

Գոյականները պատասխանում են ո՞վ, ի՞նչ հարցերին:

Ո՞վ հարցին պատասխանող գոյականները անձ են ցույց տալիս: Օրինակ՝ մարդ, բժիշկ, աղջիկ, լողորդ:

Ի՞նչ հարցին պատասխանող գոյականները իր են ցույց տալիս: Օրինակ՝ տուն, կաղնի, անձրև, լույս:

Կենդանի ցույց տվող գոյականները, օրինակ՝ շուն, վագր, աղավնի, նույնպես ի՞նչ հարցին են պատասխանում:

Նանսեն Միքայելյան

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ձյունապատ ընդդեմ

Գիտեմ, մանկիկ իմ սիրասուն,
Թե ինչու՛ ենք
Մենք մայր ասում
Հայաստանին՝
Մեր ոստանին,
Այգի դարձած
Քարաստանին։
Որովհետև մայր է հողի,
Լույսի, ջրի ու արևի,
Մայր է գինու և խաղողի,
Մայր՝ լեռնային վտակների,
Մայր՝ ձյունապատ գագաթների...
Մեր Հայաստան մայրը բարի
Արդեն քանի՞ հազար տարի
Զավակներ է ծնել արի
Եվ կանգնել է ընդդեմ չարի՝
Որդիներով իր քաջարի։
Եվ մենք հիմա, իմ սիրասու՛ն,
Հայաստանին մայր ենք ասում.
Մայր՝ խնդալից քո մանկության,
Մայր՝ անսահման երջանկության,
Մայր՝ վարդագույն քաղաքների,
Մայր՝ երազի,
Լույսի անմար
Եվ գալիքի արևամայր։

Ասույթ

Երբ ասում են Հայաստան, ակամա ոտքի եմ կանգնում։

Ռաֆայել Իսրայելյան *(Սարդարապատի հուշահամալիրի ճարտարապետը)*

Բառերի գանձատուփ

1. Շարքերից ընտրիր և կողք կողքի գրիր հոմանիշները:

գալիք անսահման սիրասուն անմար խնդալից

սիրելի մշտավառ ուրախ ապագա անվերջ

2. **ա)** Հետևյալ տողերում երկու զույգ հոմանիշ կա: Գտիր դրանք:

Զավակներ է ծնել արի
Եվ կանգնել է ընդդեմ չարի՝
Որդիներով իր քաջարի:

բ) Հոմանիշները գործածիր նախադասությունների մեջ:

3. **ա)** Հայաստան նշանակում է «հայերի երկիր»: Ինչպե՞ս կբացատրես քարաստան բառը:

բ) Քարաստան բառի ածանցով և ծառ, միրգ, ծաղիկ, այգի (ի-ն դառնում է ե) արմատներով բառեր կազմիր:

Սիրելի՛ Գիպրունիկ
Նկատել եմ արդյոք, որ ոպրան բառը, որը նշանակում է «մայրաքաղաք», այս բանաստեղծության մեջ հեղինակը գործածել է «հայրենի երկիր՝ հայրենիք» իմաստով:
Գիպրեմնիկ

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ըստ բանաստեղծության թվարկիր, թե Հայաստանն ինչերի «մայրն» է:

2. Հեղինակը հատկանիշ ցույց տվող ինչ բառով է բնութագրում քո մանկությունը: Դու ինչ բառեր կօգտագործես:

3. Գրիր 3 գոյական, որոնք երկրների անուններ են:

4. Մանկիկ, ոստան, մայր, մանկություն, զավակ, որդի, գագաթ բառերը գրիր համապատասխան սյունակներում:

ո՞վ	ի՞նչ

Իմաստունի օրատետրից

Հայաստանի Հանրապետության դրոշը

Հայաստանի Հանրապետության պետական դրոշը կոչվում է եռագույն:

Կարմիրը խորհրդանշում է հայ ժողովրդի պայքարը հանուն անկախության, ապատության և ֆրիպոնեական հավատի:

Կապույտը խորհրդանշում է հայերի՝ խաղաղ երկնքի տակ ապրելու կամքը:

Ծիրանագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ստեղծագործ տաղանդը և աշխատասեր ոգին:

Եռագույնը բարձրացվում է կառավարական շենքերի, պետական հիմնարկների, օտար երկրներում Հայաստանի դեսպանատների շենքերի վրա, ինչպես նաև միջազգային պաշտոնական հանդիպումներ-ի, մարզական մրցումների ժամանակ:

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. Հայաստանի խորհրդանիշներից մեկի մասին տեղեկություններ ներկայացրու ընկերներիդ:

2. «Մայր Հայաստանի իմ փոքրիկ անկյունը» վերնագրով շարադրություն գրիր:

Տատիկի խորհուրդները

Փոքրիկս, հիշիր, որ քո սիրո ու հոգատարության կարիքն ունեն ոչ միայն մարդիկ:

Սիրիր քո հայրենի երկիրը, բնակավայրը, սիրով ու խնամքով վերաբերվիր ամեն ծառ ու թփի, ամեն գետի ու աղբյուրի:

Հոգատար եղիր մարդկանց ու կենդանիների նկատմամբ, պահիր ու պահպանիր քո լեզուն ու հավատը:

Դադարի պահ

Բառաշղթայի բառերը դասավորիր ըստ գույների և կարդա՛ իմաստախոսությունը:

հողիինչպեսայնպեսանհնարառանցէհայրենիքիապրելէլ

★ ★ ★ ★ ★ ★ ★ ★ ★ ★ ★ ★ ★

Պատվական Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանը
Իմ անունն է,
Ազգանունն է,
Ինձ ուժ տվող զորությունն է,
Իմ հինը և նորությունն է,
Իմ լեզուն է, այբուբենը,
Ուրիշ խոսքով՝ այն ամենը,
Որ կոչվում է հայրենի տուն...
Եվ այն տունն է,
Որ շինել է պապիս պապը
Անդուլ ջանքով
Ու տանջանքով.
Քար է դրել քարի վրա,
Դար է դրել դարի վրա
Եվ քրտինքը թուխ ճակատին՝
Ձուլել է նա պատը պատին։
Էլ ոչ մի հուր,
Էլ ոչ մի սուր
Չի մտնելու իմ նոր տունը,



Չի ջնջելու իմ անունը,
Ազգանունը,
Իմ լեզուն ու այբուբենը,
Ուրիշ խոսքով՝ այն ամենը,
Ինչը ամուր սյունն է իմ տան
Եվ միասին կոչվում է հայ
Ու Հայաստան։
Եվ ես հիմա իմ տան պատին
Նոր-նոր քարեր պիտի դնեմ,
Նոր-նոր դարեր պիտի դնեմ,
Որ գնալով հզորանա,
Ծլարձակի ու նորանա,
Որ միշտ պահի իմ անունը,
Ազգանունը,
Իմ մայր լեզուն, այբուբենը,
Ուրիշ խոսքով՝ այն ամենը,
Ինչը կյանքն ու խորհուրդն է տան
Եվ միասին կոչվում է հայ
Ու Հայաստան։

Կատյա

Սուրբ է հայրենիքը։ Նա մեր հացն է, մայրական գիրկը, մեր մանկությունն է, մեր պապերի գերեզմանն է և մեր մանուկների զվարթ օրորոցը։

Ավետիք Իսահակյան

Բառերի գանձատուփ

1. *Եթե անդուլ նշանակում է «անդադար», ապա ինչ կնշանակի գործադուլ բառը։*

2. *Հայաստանում ապրող հայը կոչվում է հայաստանցի։ Ինչպե՞ս ենք կոչում՝* **ա)** *Ամերիկայում ապրող հային,* **բ)** *Լիբանանում ապրող հային,* **գ)** *Ֆրանսիայում ապրող հային։*

Նմուշ՝ Պարսկաստանում (Իրան) ապրող հայ – պարսկահայ։

3. *Հայկական այնպիսի անուններ գրիր, որոնցից ազգանուններ են կազմվել։ Նմուշ՝ Արարատ - Արարատյան։*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Մեկնաբանիր բանաստեղծության վերջին տողերը:*
2. *Հայ նշանավոր հերոսների անուններ թվարկիր:*
3. *Քեզ համար Հայաստանը միայն Հայաստանի Հանրապետությունն է:*
4. *Բանաստեղծությունից դուրս գրիր 5 հասարակ գոյական (ինչ հարցին պատասխանող):*

Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. *«Իմ երկիրը» վերնագրով շարադրություն գրիր:*
2. *Հայկական մի ավանդազրույց կամ հեքիաթ պատմիր:*

Իմաստունի օրատետրից

Հայաստանի Հանրապետության զինանշանը

Հայաստանը 1918 թ. անկախություն չեռք բերեց և ունեցավ իր զինանշանը:

Զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ նոյի տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների՝ Արտաշեսյանների, Բագրատունիների, Արշակունիների, Ռուբինյանների զինանշանները:

Վահանը պահում են արծիվն ու առյուծը, որոնք հին հայկական խորհրդանիշներ են:

Զինանշանը պատկերվում է կառավարական շենքերի, պետական հիմնարկների ցուցանակների, մետաղադրամների, կնիքների վրա և այլն:



Մկրտիչ Խերանյան

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ 1

Սասնա Դավիթն ելավ հեծավ, խթանեց ձին ոսկեթամբ
Ու սրաթև արծվի նման թռավ հասավ Ծովասար։
Այնտեղ ձիուց նա ցած իջավ ու պատյանից սուրը հանած՝
Դրեց իր հոր գերեզմանին, համբուրեց քարն ու ասաց.
- Հայր իմ, օրհնի՛ր սուրս արդար և պատանի քո որդուն,
Կռիվ կերթամ ոսոխի դեմ, հաստատ մնա Սասնա տուն...
Կերթամ Մսրա բռնակալին դուրս քշելու մեր հողից,
Որ մեր սարերն ազատ մնան, ու բոց չելնի քո սրտից...

Կանչեց Դավիթն ու սլացավ, սուրաց ինչպես հողմ ուժգին,
Հասավ, կանգնեց իր նժույգով Սեղանսարի բարձունքին։
Նայեց նա ցած. դաշտում փռված Մսրա զորքին թիվ չկար,
Ծածկվել էր դաշտն ընդարձակ՝ վրաններով անհամար։
- Հեյ-հեյ, լսե՛ք, վե՛ր կացեք, վե՛ր,
Մսրա զորքեր.
Ի՞նչ եք քնել խորունկ էդպես՝
Մեռելի պես։
Ելե՛ք, իսկույն զե՛նք կապեցեք,
Ձի՛ թամբեցեք, ելեք հեծե՛ք,
Հետո չասեք,
Թե Դավիթը սուրն անխնա
Քաշեց քնած զորքի վրա։

օրհնել
ալևոր
արյուն
մեղք
ընդարձակ
բարձունք

Գոռաց Դավիթն ամպի նման Սեղանսարի կատարից
Եվ ահարկու Թուր Կայծակին դուրս քաշելով պատյանից՝
Դաշտ սլացավ ու շանթի պես ճայթեց Մսրա բանակում։
- Ի՞նչ եք եկել, բանակ զարկել Սասնա ազատ աշխարհում,-
Գոչեց Դավիթն ու աջ ու ձախ շանթահարեց իր սրով,

Դաշտը ներկեց հազարավոր զինվորների արյունով։

Այն ժամանակ Մսրա զորքից, ճեղքելով ծովն արյունի,
Եկավ կանգնեց Դավթի առաջ մի ալեզարդ ծերունի։
- Դավի՛թ,- ասաց,- զսպի՛ր մի պահ քո
բարկությունն ահագին
Եվ լսի՛ր ինձ, ակա՛նջ արա ալևորիս խոսքերին։
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ, որ կոտորում ես
էդպես,
Ամեն մեկը մի տան ճրագ, մի տան սյուն է
հենց քեզ պես։
Թագավորն է քո թշնամին, կռիվդ նրա՛ հետ արա,
Նա է պոկել տնից-տեղից ու բերել է մեզ բռնի,
Տվել էստեղ սրի բերան... Զինվորը ի՞նչ մեղք ունի...
- Ճիշտ ես ասում դու, ծերունի՛, հավան եմ քո խոսքերին,
Բայց թագավորն ու՞ր է, ասա՛, որ սև բերեմ իր օրին։

Առակաածք

Թշնամությունից բարիք չի ծնվում։

Բառերի գանձատուփ

1. *Գտի՛ր ձի, ոսոխ, սուրալ, լսել բառերի հոմանիշները։*

2. *Ծանթ նշանակում է «կայծակ», կարկտահարել նշանակում է «կարկուտով հարվածել՝ ծեծել», «կարկուտի նման հարվածել»։ Ինչպե՞ս կբացատրես շանթահարել բառը։*

3. *Տան ճրագ նշանակում է «տան, ընտանիքի հույս, հենարան»։ Գտի՛ր այն հատվածը, որտեղ օգտագործվել է այս բառակապակցությունը։*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Վերընթերցի՛ր այն հատվածները, որտեղ երևում է, որ Դավիթը՝*

ա) *հայրենասեր և ազատասեր է,*

բ) *կռվի մեջ արդար է ու ազնիվ, անհավասար կռիվ չի սիրում, ուրիշի թուլությունից չի օգտվում,*

գ) *լսում ու հարգում է մեծերի խոսքը, նրանց խորհուրդը:*

2. *Ինչպե՞ս կբացատրես հետևյալ արտահայտությունները՝*

ա) *Մսրա զորքին թիվ չկար,* **բ)** *արյան ծով:*

3. *Ինչպե՞ս ես հասկանում Դավթի խոսքը՝ ուղղված Մսրա զորքին:*

4. **ա)** *Կարդացածդ հատվածից դու՛ր գրիր անձ ցույց տվող (ո՞վ հարցին պատասխանող) 4 հասարակ գոյական:*

բ) *Իր ցույց տվող (ի՞նչ հարցին պատասխանող) 4 հասարակ գոյական էլ ի՛նքդ գրիր:*

Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. *Վիպերգից այլ հատվածնե՛ր կարդա և պատմի՛ր:*

2. *Մի հեքիա՛թ կարդա, որտեղ քաջ հերոսը հաղթում է չարին:*

Խթանը կոշիկների կրունկներին ամրացվող մետաղյա հարմարանքն է, որով ձիավորները խփում են ձիու կողերին, որպեսզի նա տեղից շարժվի: Ուրեմն ի՞նչ է նշանակում խթանել:

Դադարի պահ

Լուծի՛ր գաղտնագիրը և կիմանաս, թե ո՛ր լեզուներով է թարգմանվել «Սասնա ծռեր» վիպերգը:

★ - *ե* ◘ - *ր* ● - *ս*
○ - *ա* ✖ - *ու* ▼ - *պ*
◖ - *հ* ✦ - *ն* ♦ - *ֆ*
⬟ - *ռ* ▲ - *կ*
✱ - *գ* ◈ - *լ*



Լեզվաբանի դասը

Ծովինար, Մհեր, Սասունցի Դավիթ. սրանք ինչ՞եր են:

Գոյական. հատուկ և հասարակ

Գոյականները լինում են *հատուկ* և *հասարակ*:

Միատեսակ բոլոր առարկաներն ունեն մեկ ընդհանուր անուն, որը կոչվում է *հասարակ* անուն: Օրինակ՝ *լիճ*, *քաղաք*, *տղա*, *կին*:

Միատեսակ առարկաներից ամեն մեկին տրվող առանձին անունը կոչվում է *հատուկ* անուն:

Հատուկ անուններ են՝

ա) մարդկանց անունները և ազգանունները, օրինակ՝ *Հայկ*, *Անահիտ*, *Ղազարոս Աղայան*,

բ) երկրների, քաղաքների, գյուղերի, լճերի, գետերի, լեռների, դաշտավայրերի անունները, օրինակ՝ *Հայաստան*, *Երևան*, *Օշական*, *Սևան*, *Հրազդան*, *Արագած*, *Արարատյան դաշտ*,

գ) կենդանիներին տրվող անունները, օրինակ՝ *Բողար*, *Ծեկո*,

դ) թերթերի, ամսագրերի, ստեղծագործությունների անունները, օրինակ՝ *«Ծիծեռնակ»* ամսագիր, *«Ոսկե ձկնիկը»* հեքիաթը:

Հատուկ անունները գրվում են *մեծատառով*:

Իմաստունի օրատետրից

Սասնա ծռեր

«Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» վիպերգը ստեղծվել է շատ հին ժամանակներում: Վիպերգը մեկ է հասել ընտրիվ այն մարդկանց, որոնք մշակել ու անգիր պատմել են այդ ստեղծագործությունը և փոխանցել ուրիշներին: Առանձին հատվածներ նույնիսկ երգել են:

Վիպերգի գլխավոր հերոսը Սասունցի Դավիթն է: Վիպերգում պատմվում է ոչ միայն Դավթի, այլ նաև նրա պապի՝ Սանասարի, հոր՝ Մեծ Մհերի, որդու՝ փոքր Մհերի կյանքի պատմությունը: Այդ պատմություններից յուրաքանչյուրը կոչվում է *ճյուղ*: Հայկական վիպերգն ունի չորս ճյուղ՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Մհեր»:

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ 2

Ելավ Դավիթն ու ձին հեծավ, քշեց գնաց քամու նման
Ու կանգ առավ թագավորի մեծ վրանի դեմ հանդիման։
- Մելի՛ք,- գոռաց,- դու՛ս արի շուտ, կռիվ անենք, զարկենք իրար,
Ի՞նչ ես ընկել վրանիդ մեջ՝ ծանր, ինչպես ջաղացքար։

Հենց որ Դավթի ձայնը լսեց,
Սարսափն առավ դև Մելիքին.
Ու կեղծավոր լեզվին դիմեց,
Որ նենգաբար խաբի կրկին։

- Դավի՛թ,- ասաց,- արի՛, նստենք,
Դեռ հա՛ց ուտենք իմ վրանում,
Հետո կելնենք, կռիվ կանենք,
Եթե կռվել ես կամենում։

- Չեմ նստի ես քո սեղանին
Քեզ հետ, Մելի՛ք, հաց չեմ կիսի,
Չես կարող ինձ խաբել կրկին
Այդ խոսքերով քո աղվեսի։

հոգի
խաբել
համբուրել
կեղծավոր

Մելիքը որ տեսավ՝ զուր է, էլ չի կարող խաբել Դավթին,
Ճարը կտրած՝ հրամայեց դուրս քաշել իր հրեղեն ձին։

Դավիթն հեծավ ձին հրեղեն ու քաշելով Թուր Կայծակին,
Եկավ թափով, որ մի զարկով առնի Մսրա դևի հոգին։
Փայլատակեց Թուր Կայծակին, իջավ թափով ու շեշտակի
Կիսեց Մսրա նենգ Մելիքին ...

Կանգնեց Դավիթն, ապա հպարտ դարձավ Մսրա զինվորներին.
- Մեկ էլ չգա՛ք դուք մեզ վրա, ոտք չդնեք Սասնա հողին։
Բայց թե որ սիրտ անեք կրկին սուր քաշելու դուք մեզ վրա,
Սասնա ահեղ Թուր Կայծակին, ինչպես այսօր՝ կշողշողա,

Կելնեն ձեր դեմ առյուծասիրտ հազար Մհեր և Սանասար,
Հազար Դավիթ, Քեռի Թորոս կանեն հողին ձեզ հավասար:

Իմաստախոսություններ

Եթե ուժը միանա արդարության հետ, ինչը կարող է ուժեղ լինել այդ միությունից:

Խաղաղությունը և ազատությունը բարիքներից մեծագույնն են:

Գիտունիկ, աաա՛, խնդրեմ, մ՚իթե որևէ տեղ հոգի են վաճառում, և հոգին կարելի՞ է առնել: «Սասունցի Դավիթը» կարդալիս տեսա առնի մարա դևի հոգին արտահայտությունը:

Գիտեմ, ինչուիկ, մեր լեզվում շատ արտահայտություններ կան, որոնք ուղղակի իմաստով չպետք է հասկանաս: Դրանցից ամեն մեկն իր յուրահատուկ իմաստն ունի, որը պետք է հասկանաս տվյալ հատվածից կամ գտնես բառարանում: Կարող ես հարցնել իմացողներին, ինչպես որ հիմա արեցիր:
Հոգին առնել նշանակում է «սպանել»:

Բառերի գանձատուփ

1. Գրի՛ր *փայլատակել, զարկել, առյուծասիրտ, զուր, դեմ հանդիման, անհամար* բառերի հոմանիշները:

2. *Նենգ* նշանակում է «խարդախ, խորամանկ»: Օրինակ՝ *նենգ թշնամի* «խարդախ, խորամանկ թշնամի»: Իսկ ի՞նչ է նշանակում *նենգաբար* (*նենգաբար խաբել*):

3. Բացատրի՛ր նախադասությունները՝

ա) *Սարսափն առավ դև Մելիքին:*

բ) *Հավան եմ քո խոսքերին:*

4. *Էս, էդպես, ջաղացքար* բառերը խոսակցական են: Գրի՛ր դրանց գրական ձևերը:

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Ու՞մ դեմ էր կռվի ելել Դավիթը և ինչու՞:*

2. *Ինչու՞ են հերոսին Սասունցի Դավիթ անվանում:*

3. *Դավիթը Մելիքին ո՞ր կենդանու հետ է համեմատում: Ինչու՞:*

4. *Համեմատիր Դավթին և Մելիքին:*

5. *Կարդացածդ հատվածում գտիր անձ և իր ցույց տվող գոյականներ և գրիր համապատասխան սյունակում:*

անձ ցույց տվող		իր ցույց տվող	
հատուկ	հասարակ	հատուկ	հասարակ

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Նկարագրիր, թե ինչպես ես պատկերացնում Սասունցի Դավթին:*

2. *Գտիր «Սասունցի Դավթի» նկարազարդումներից և ներկայացրու դասարանիդ ուշադրությանը: Նկարի մասին կարծիքդ շարադրիր գրավոր:*

Փորձիր ինքնուրույն բացատրել, թե կապույտ գրվածներն ի՞նչ են նշանակում:

Բայց թե որ սիրտ անեք կրկին սուր քաշելու դուք մեզ վրա:
Սասնա ահեղ Թուր Կայծակին, ինչպես այսօր՝ կշողշողա,
Կելնեն ձեր դեմ առյուծասիրտ հազար Միհր և Սանասար,
Հազար Դավիթ, Քեռի Թորոս կանեն հողին ձեզ հավասար:

Դադարի պահ

Կծիկի թելին հետևելով՝ կարդա՛ իմաստախոսությունները:



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Մատենադարան բառը կազմված է մատյան և դարան բաղադրիչներից: Մատյան հնում նշանակել է «գիրք», իսկ դարան նշանակում է «պահոց», «պահարան», այսինքն՝ Մատենադարանը գրապահոց է:

Հին ժամանակներում հայերը, ինչպես և այլ ժողովուրդներ, գրքերը գրում էին ձեռքով: Այդ պատճառով էլ դրանք կոչվում են ձեռագիր մատյաններ: Դրանցից շատերը մագաղաթից են: Մագաղաթը հատուկ եղանակով պատրաստում էին հորթի, գառան կամ ուլի կաշվից: Մարդիկ կային, որոնք տարբեր հեղինակների գրվածքներն արտագրում էին մագաղաթե թերթերի վրա: Նրանց գրիչներ էին անվանում: Իսկ մատյանները պատկերազարդող նկարիչներին ծաղկող էին անվանում: Հետո ուրիշ վարպետներ մագաղաթները միացնում էին, կազմում ու գիրք դարձնում:

Հայերեն հազարավոր ձեռագիր մատյաններ այժմ պահվում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում: Այդ պատճառով էլ այն հաճախ կոչում են ձեռագրատուն:

Ձեռագրերից շուրջ 14 հազարը հայերեն են, 2800-ը՝ օտար լեզուներով: Սրանց մեջ կան արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, հունարեն և այլ լեզուներով մատյաններ: Դրանք վերաբերում են գիտության ու մշակույթի տարբեր բնագավառների՝ պատմություն, գրականություն, քերականություն, մաթեմատիկա,

մատյան
Մատենադարան
ժողովուրդ
գրվածք
աշխարհագրություն
մաթեմատիկա
հաղթանակ

աշխարհագրություն, բժշկություն, իրավունք, փիլիսոփայություն, տիեզերագիտություն և այլն:

Մատենադարանում պահվող ձեռագրերից յուրաքանչյուրը մարդկանց պես իր կենսագրությունն ունի: Պատմում են, որ գերի ընկած ձեռագրերի համար հայերը երբեմն գյուղեգյուղ, տնետուն ընկած փող են հավաքել, վճարել ու ձեռագիրն օտար ափերից տուն բերել: Հայ մարդիկ երբեմն իրենց կյանքի գնով են փրկել ձեռագրերը:

Բազում վտանգների միջով են անցել ձեռագրերը, մարդկանց նման գերի տարվել և հրից ու սրից փրկվելով՝ եկել, մեզ են հասել: Դրանք հայ ժողովրդի տառապանքների ու հաղթանակների, նրա ազատասեր ու ստեղծագործ ոգու վկաներն են:

Հանելուկ

Հրաշք դաշտ է, ցանված դաշտ է,
Երեկ, այսօր, դարեր առաջ,
Բայց ամեն օր մեզ է տալիս
Բարիքները իր ամբարած:

Իմաստախոսություն

Այն տունը, որտեղ գրքեր չկան, նման է հոգուց զրկված մարմնի:

Սիրելի՛ ինչուհի

Դու երևի նկատեցիր, որ մեկ ծանոթ մատյան բառն այստեղ գործածվել է ուրիշ իմաստով: Այո՛, հնում մատյան նշանակում էր «գիրք»: Սկսելի ուշ այդ բառով սկսեցին անվանել մաքուր թերթեր ունեցող այն գիրքը, որի մեջ կանական բաներ են գրում: Այստեղից էլ՝ բոլորիս վաղ ծանոթ դպրոցական մատյանը կամ դասամատյանը:

Գիրեմնիկ

Բառերի գանձատուփ

1. *Ի՞նչ է նշանակում կյանքի գնով բառակապակցությունը:*

2. *Փող են հավաքել, վճարել ու ձեռագիրն օտար ափերից տուն բերել նախադասության մեջ ինչ իմաստով է գործածվել տուն բառը:*

3. *Տեքստից դու՛րս գրիր գիտություն անվանող բառերը: Նրանց մեծ մասն ինչ ընդհանուր բաղադրիչ ունի:*

4. *Հորթ, գառ, ուլ. ո՞րն է սրանց ընդհանուր իմաստը:*

5. *Թղթե բառին տեքստի ո՞ր բառն է կազմությամբ նման: Նույն ածանցով բառեր ասա:*

6. *Տեքստի նախավերջին հատվածում գտի՛ր այն բառերը, որոնք կազմվել են արմատի կրկնությամբ: Նման 1-2 բառ էլ ի՛նքդ ասա:*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Հնում մարդիկ ինչի՞ վրա էին գրում:*

2. *Ինչի՞ց էին պատրաստում մագաղաթը:*

3. *Մարդիկ առաջ ինչպե՞ս էին անվանում գրքերը:*

4. *Մատենադարանն ինչու՞ են անվանում նաև ձեռագրատուն:*

5. *Ինչպիսի՞ «կենսագրություն» ունեն Մատենադարանում պահվող ձեռագրերը: Պատմի՛ր այդ մասին:*

6. *Տեքստում ի՞նչ հատուկ գոյականներ կան:*

7. *Շարունակի՛ր ըստ նմուշի:*

Մարդիկ - մարդկանց, տղամարդիկ - ....., կին - ....., ոգի – ոգու, որդի - ....., այգի - .....:

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Մատենադարանի մասին տեղեկություններ հավաքիր և մի փոքրիկ զեկուցո՛ւմ պատրաստիր:*

2. *Պատմի՛ր քո դպրոցի գրադարանի մասին: Ի՞նչ գրքեր ես սիրում կարդալ:*

Սիրելի՛ Գիպունիկ

Մատենադարանի մասին փոքրիկ կեկույում պիտի պատրաստեմ: Ուզում եմ այն հետաքրքրական դարձնել: Ինչ կարող ես օգնել: Նախապես հայտնում եմ շնորհակալություն:

Ինչուիկ

Սիրելի՛ բարեկամ

Քեզ եմ ուղարկում Երևանի Մատենադարանի «ամենա-ամենաներից» մի քանի տեղեկություն: Մատենադարանում պահվող ամենահին չեռագիր մատյանը՝ Վեհամոր Ավետարանը, գրվել է VII դարում:

Մատենադարանի ամենամեծ չեռագիր մատյանը կշռում է 27.5 կգ և ունի շուրջ 600 թերթ, որոնցից յուրաքանչյուրը պատրաստված է մեկ հորթի կաշվից:

Ամենափոքր չեռագիրը լուցկու տուփի չափ է, կշռում է ընդամենը 19 գրամ: Նրա թերթերը պատրաստված են նորածին մեկ ուլի կաշվից:

Ամենաշատ չեռագիր մատենադարանին նվիրել է հարություն հապարյանը (Ալյու Շորժից). շուրջ 400 մատյան: Շքմեղուցիչ է, չէ՞:

Ինչուիկ ջան, վստահ եմ, որ մնացածը դու ինքդ հաջողությամբ կանես:

Գիպունիկ

Դադարի պահ

Մատենադարանի մուտքի առջև կանգնեցված են հայ նշանավոր գործիչների արձաններ: Ըստ գույների կարդա՛ նրանց անունները և որոշի՛ր, թե ովքե՛ր են:

Մխիթար Դորոս Գոշ Գրիգոր Ֆրիկ Ռոսլին Մովսես Տաթևացի Անանիա Խորենացի Ծիրակացի

մաթեմատիկոս մանրանկարիչ առակագիր պատմիչ փիլիսոփա բանաստեղծ

Վահագն Դավթյան

ԽԱՉՔԱՐ



Տատասկների, քարերի մեջ
Քամիների, արևի մեջ,
Ձյուների մեջ, շոգ ու տոթի,
Այսպես խոնարհ, այսպես ըմբոստ,
Այսպես փխրուն, այսպես շիտակ,
Այսպես խրթին ու այսպես պարզ
Կանգնել է նա երկնքի տակ ...
Կանգնել է նա արևի դեմ,
Որպես թախիծ ու խղճի սյուն,
Կանգնել է նա դարերի դեմ,
Որպես խաչված գեղեցկություն ...

խոնարհ
խրթին
խիղճ
ըմբոստ

Բմաստաբանություն

Հայրենիքի հողն ու ջուրն անուշ են:

Սիրելի՛ Գիրքեմնիկ

Այս փոքրիկ բանաստեղծությունից դուրս գրեցի չորս բառ և գտա բացատրությունները՝ ըմբոստ «անհնազանդ, ապստամբ», խրթին «բարդ, հասկանալու համար դժվարին», շիտակ «ուղիղ, ճիշտ, ճշմարիտ, արդարամիտ, ազնիվ», տատասկ «փշոտ խոտաբույս»:

Ինչուհի

Սիրելի՛ Ինչուհի

Երկու բան ավելացնեմ միայն. տատասկ բառը հաճախ հենց «փուշ» նշանակությամբ էլ գործածում են, չնայած ունենք նաև փուշ ու տատասկ բառակապակցությունը:

Իսկ շիտակ բառը կարող է դրվել շատ բառերի հետ, օրինակ՝ շիտակ խոսք, մարդ և այլն:

Գիրքեմնիկ

Բառերի գանձատուփ

1. *Գրի՛ր քամի, թախիծ, խոնարհ և դեմ բառերի հոմանիշները:*

2. *Բանաստեղծության մեջ հոմանիշ և հականիշ բառերի մեկական զու՛յգ գտիր:*

3. *Բանաստեղծությունից դու՛րս գրիր հատկանիշ ցույց տվող այն բառերը, որոնցով կարելի է բնութագրել նաև մարդկանց:*

4. *Քար արմատով երկուական բա՛ռ կազմիր:*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Ըստ բանաստեղծության ինչպիսի՞ն է խաչքարը:*

2. *Դու՛րս գրիր բնության երևույթներ և վիճակներ ցույց տվող բառերը: Քո կարծիքով դրանք ինչու՞ են գործածվել:*

3. *Բանաստեղծությունն ինչպիսի՞ տրամադրություն է առաջացնում՝ ուրա՞խ, թախծո՞տ, թե՞ ըմբոստ:*

4. *Խիղճ - խղճի, երկինք - երկնքի ձևերի նմանությամբ գրի՛ր երկիր, ձեռագիր, միտք, սիրտ բառերի զույգերը:*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Խաչքարերի մասին հետաքրքրական տեղեկություններ հավաքիր և ներկայացրու՛ գրավոր:*

2. *Նկարագրի՛ր քո տեսած խաչքարերից մեկը:*

Իմաստունի օրատետրից

Խաչքար

Խաչքարը հայկական մշակույթի յուրօրինակ գանձերից է:

Խաչքարեր կարելի է տեսնել գերեզմանոցներում, աղբյուրների և կամուրջների մոտ, վանքերում, եկեղեցիների մոտ: Դրանք կանգնեցվել են տարբեր առիթներով՝ շինարարության ավարտի, հաղթանակի, մահվան: Մեր օրերում խաչքարը նաև զարդակոթող է:

Խաչքարի վրա խաչն է՝ մեր երկրի խորհրդանշաններով՝ խաղողի տունկ և ողկույզ, նուռ, արև: Դրանք կարծես ասեղնագործված լինեն:

Վարդգես Պետրոսյան

ՕՇԱԿԱՆՅԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ 1

Լեհաստանից մի լրագրող էր եկել: Միասին Օշական էինք գնացել՝ Մաշտոցի շիրիմը տեսնելու: Երբ դուրս եկանք եկեղեցուց, իմ լեհ հյուրն ասաց.

- Քաղցած եմ:

- Գյուղում ռեստորան չկա, քսան-քսանհինգ րոպե պիտի համբերես, կհասնենք Երևան:

- Ուզում եմ այստեղ մի քիչ թափառենք փողոցներում, գերեզմանատուն գնանք, խաղողի այգիներ:

- Ուրեմն պիտի սոված մնաս:

- Չեմ կարող. եթե մայրս Վարշավայում իմանա, որ ես ժամը երեքին դեռ բան չեմ կերել, վաղը Երևան կգա: Մտի՛ր որևէ տուն, գոնե հաց ու պանի՛ր առ, քայլելով կուտենք:

Եվ հանկարծ... Ես հացի հոտ առա: Գյուղում նոր թխած հացի հոտը հրավիրատոմս է:

Ահա երեսունհինգ-քառասուն տարեկան մի կին կարմրատակած կախվել էր թոնրի վրա: Կողքին նստած էր տասներկու տարեկան մի աղջիկ:

- Բարև՛, քույրի՛կ,- ասացի:

- Բարև՛, ախպե՛ր ջան,- կինը նայեց ինձ հազար տարվա ծանոթի պես:

Ես բացատրեցի, թե ինչու՛ եմ եկել, ասացի, որ հետս հյուր կա օտար երկրից, մի խոսքով՝ խնդրեցի մի քանի հաց ու, եթե կա, մի կտոր պանիր: Հետո էլ չամաչեցի ու ավելացրի.

- Ինչ որ պետք է, կտանք, քույրի՛կ ջան:

որևէ հանկարծ խնդրել երեսունհինգ տասներկու

Կինն ինձ ոչինչ չպատասխանեց, այլ դարձավ աղջկան.

- Հասմիկ, տատիկին կանչի, մի թռի, շու՛տ...

Աղջիկը թռավ, իսկ մեկ-երկու րոպե անց երևաց տատիկը՝ բարի դեմքով մի պառավ։

- Ներս կանչիր հյուրիդ, ախպեր ջան,- ասաց կինը՝ թոնրի մոտից վեր կենալով։

Հանելուկ

Ափ անեմ,
Ծափ անեմ,
Տաք քարին
Շրմփ անեմ։

Բառերի գանձատուփ

1. *Գրի՛ր հոտ, խնդրել, հանկարծ բառերի հոմանիշները։*

2. *Գրի՛ր գալ, վաղը, քաղցած, վերջ, բարի, տալ բառերի հականիշները։*

3. *Բացատրի՛ր հազար տարվա ծանոթ բառակապակցությունը։*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Հեղինակը լեհ հյուրին ինչու՞ էր Օշական տարել։*

2. *Տեքստում տարվա ո՞ր եղանակն է նկարագրվում։*

3. *Գյուղի փողոցներն ինչու՞ էին համարյա դատարկ։*

4. *Տեքստում հայկական ի՞նչ դիմելաձևեր են գործածվել։ Մեկ-երկուսն էլ դու՛ ավելացրու։*

5. *Եթե արտասահմանից հյուր ունենաք, նրան ու՞ր կտանեք։*

Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. *Քո բնակավայրի մարդիկ հյուրասեր են։ Պատմի՛ր։*

2. *Մի հեքիա՛թ պատմիր, որտեղ բարի պառավ լինի։*

Լեզվաբանի դասը

Հյուր - հյուրեր, այգի - այգիներ գոյգերի բառերն ինչո՞վ են հակադրվում:

Գոյականի թիվը

Գոյականները լինում են եզակի և հոգնակի:

Եզակի գոյականները ցույց են տալիս մեկ առարկա: Օրինակ՝ երգ, ձուկ, ծաղիկ, երեխա:

Հոգնակի գոյականները ցույց են տալիս մեկից ավելի միատեսակ առարկաներ: Օրինակ՝ երգեր, ձկներ, ծաղիկներ, երեխաներ:

Հոգնակին կազմվում է -եր և -ներ վերջավորություններով:

Միավանկ գոյականների հոգնակի թիվը կազմվում է -եր վերջավորությամբ: Օրինակ՝ ծառ - ծառեր, ձի - ձիեր, տուն - տներ:

Բացառություն են՝ մարդ - մարդիկ, կին – կանայք:

Ձուկ, մուկ, բեռ, լեռ, դուռ, գառ, հարս, եզ, թոռ, ծոռ, ծունկ, նուռ, ռուս միավանկ բառերի հոգնակին կազմվում է -ներ վերջավորությամբ՝ ձկներ, մկներ, բեռներ, լեռներ, դռներ, գառներ, հարսներ, եզներ, թոռներ, ծոռներ, ծնկներ, նռներ, ռուսներ:

Բազմավանկ գոյականների հոգնակի թիվը կազմվում է -ներ վերջավորությամբ: Օրինակ՝ փաթիլ-փաթիլներ, թռչուն-թռչուններ:

Դադարի պահ

Լուսանկարների շրջանակների գույների օգնությամբ ճանաչի՛ր Հայաստանի տեսարժան վայրերը:

Ամբերդ

Տաթևի վանք

Զվարթնոց

Գառնու տաճար

ՕՇԱԿԱՆՅԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ 2

Ես ձայն տվեցի լեհ հյուրիս՝ Վոյտեկին. մտածեցի, որ նրա համար հետաքրքիր կլինի: Իրոք, հետաքրքրեց: Երեխայի պես, բերանը բաց, նա նայում էր կարմրած թոնրին, հետո՝ կարմրող տատիկին, հետո՝ լավաշներին, որ ծովափին մերկացած մարդկանց պես կարծես արևի լոգանք էին ընդունում:

Տանտիրուհին քիչ անց դուրս եկավ կողքի սենյակից:

- Ներս մտեք, ախպեր ջան,- ասաց նա ինձ,- հայերեն գիտի՞ հյուրը...

- Չէ,- ասացի ես,- իրենց երկրում հայերեն չեն անցնում:

- Յա՛,- զարմացավ կինը:

Ներս մտանք: Գյուղական համեստ մի տուն էր: Սեղանին թթու էր դրած, հաց, պանիր, կարագ, մածուն, մուրաբա, լոբի: Վոյտեկը զարմացած նայում էր ինձ:

- Ուտենք, - ասացի:

Չգիտեմ, ամեն ինչ համո՞վ էր, թե՞ մենք էինք շատ քաղցած: Ինքնամոռացության մեջ ուտում էինք, երբ բակից տղամարդու ձայն լսեցի, ու ձայնն անմիջապես ներս մտավ: Քառասունին մոտ տղամարդ էր:

- Բարով եք եկել,- ասաց նա՝ ձեռքը մեկնելով,- միսը տվի, հիմի կրակին կդնեն:

Մի խոսքով՝ քիչ անց մեր կողքին թշշում էր մաճառը, իսկ սեղանին էլ տեղ ու դադար չկար: Վոյտեկն ուտում էր, խմում և մեկ-մեկ զննող հայացքով նայում ինձ, հետո՝ տանտիրոջը:

կարագ
նախօրոք
թշշալ
օդանավակայան
խաբել

Երևան հասանք, երբ արդեն գիշեր էր։ Ամբողջ ճանապարհին Վոյտեկը պնդում էր, որ տանտերերն ինձ ճանաչում էին, որ ես նրանց հետ նախօրոք պայմանավորվել էի։ Ես սկզբում ուշադրություն չէի դարձնում, բայց նա նույնը պնդեց նաև հաջորդ առավոտ։ Նույնիսկ օդանավակայանում, երբ ես ճանապարհում էի նրան, ասաց.

- Լավ խաբեցիր, հա՛, Օշականում...

Առած-ասացվածքներ

Աղ ու հաց, սիրտը բաց։

Հյուրը տանտիրոջ վարդն է։

Բառերի գանձատուփ

1. *Գրի՛ր գիշեր, հաջորդ և հետաքրքիր բառերի հականիշները։*

2. *Հետևյալ անուններից -ացի, -եցի, -ցի վերջածանցներով բառեր կազմիր.*

Օշական, Էջմիածին, Գորիս, Լոռի, Գավառ, Տավուշ, Գյումրի, Ջերմուկ, Կապան, Մեղրի, Վանաձոր, Վան։

3. *Դու գործածու՞մ ես ախպեր, հա՛, յա՛, հիմի բառերը։ Եթե այո, ապա ե՞րբ և որտե՞ղ։*

4. *Ի՞նչ են նշանակում՝ վեր կենալ, ձայն տալ, բերանը բաց։*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Բնութագրի՛ր հեղինակին, լրագրողին և նրանց հյուրընկալող հայ գյուղացիներին։*

2. *Տանտերերն ի՞նչ հյուրասիրեցին անակնկալ հյուրերին։*

3. *Կարդացածիդ մեջ քեզ ի՞նչը դուր եկավ, իսկ ի՞նչը դուր չեկավ։ Ինչու՞։*

4. *Քո կարծիքով փոքրիկ աղջիկը հյուրերի հետ սեղան նստեց։*

5. *Քո կարծիքով այս պատմությունն իրական է, թե՞ հեղինակը հորինել է։*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Դուք անակնկալ հյուր (կամ հյուրեր) ունեցել եք: Համառոտ գրի՛ր այդ մասին:*

2. *Ո՞ր ընկերոջդ կամ ընկերուհուդ տանը հյուրընկալվելիս ես քեզ շատ լավ զգացել: Պատմի՛ր այդ մասին:*

Իմաստունի օրատետրից

Մածուն

Մածունի հայրենիքը համարվում է հայկական լեռնաշխարհը:

Մածունի գյուտը հապարամյակներ առաջ պատահաբար է արվել, երբ կաթը վերափոխվել է «թթու կաթի»՝ մածունի: Այսօր էլ մածուն պրանալու կամ մերելու եղանակը նույնն է մնացել:

Եռացրած (30-35 աստիճան) կաթի մեջ փիչ քանակությամբ թթված մածուն խառնելով՝ մակարդում են կաթը: Հատկապես 5-6 օրական մածունը հրաշալի դեղամիջոց է աղեստամոքսային հիվանդությունների, թունավորումների, այրվածքների, խոցերի և ուռուցքների դեմ: Այն պատկերավոր անվանում են «աստվածային կերակուր»:

Տատիկի խորհուրդները

Փոքրիկս, հյուրընկալությունը մեր ժողովրդի գեղեցիկ հատկանիշներից մեկն է:

Դու՛ էլ աշխատիր պահել հյուրասիրության հայկական ավանդույթները:

Քաց սրտով ու ժպիտով ընդունի՛ր քո տուն եկող հյուրին, զերմ ու հոգատա՛ր եղիր նրա նկատմամբ: Անկեղծ սրտով նրա հետ կիսի՛ր այն, ինչ ունես: Հիշի՛ր, կարևորը ոչ թե սեղանի լիությունն է, այլ փանտիրոջ սրտաբացությունը:

Հենրիկ Արթենյան

ԱՐԱԳԱԾԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Որտեղի՞ց են աշխարհի գալիս
Աղբյուրները զրնգալից,
Գառների պես ժիր ու կայտառ
Ցատկոտում են ժայռերն ի վար,
Խոսք են բացում խոտերի հետ,
Ցողում ճամփան խայտաբղետ,
Ծիլ ու ծաղկին՝ տապից այրվող,
Նվիրում են կենարար ցող։
Կարկաչում ու գալարվում են,
Լանջերն ի վար գլորվում են,
Ծարավները մարում մարդկանց,
Ծիծաղում են ձայնով մանկան
Աղբյուր կոչվող զանգակները՝
Արագածի զավակները։

Հանելուկներ

Գիշեր-ցերեկ
Անվերջ հոսում,
Գիտի երգել,
Բայց չի խոսում։

Շոգից թև առավ,
Երկինք բարձրացավ,
Դարձավ ձյուն, անձրև,
Կրկին հետ դարձավ։
Ցրտին ճերմակած
Վերմակ է բացում,
Շոգին ծարաված
Շուրթեր է թացում։

Առածներ

Որ աղբյուրից մարդ ջուր խմի, այն աղբյուրին քար չի գցի։

Աղբյուրը որ կեղտոտես, ջուր որտեղի՞ց պիտի խմես։

Օրինանք

Զրի նման երկար կյանք ունենաս։

Սիրելի՛ Գիտեմնիկ

Բանաստեղծության մեջ ինչ հետաքրքրեց կենարար յող բառակապակցությունը: Բառարանը բացեցի և իմացա, որ կենարար նշանակում է «կյանք, կենդանություն տվող»: Նյութեղ հենց այդպես է. յողը կյանք է տալիս կիսիչ արևից այրվող ծիլ ու ծաղկին: Գիտեմ, թե ի՞նչ լավ է. այսօր նոր բառ սովորեցի:

Ինչուհի

Բառերի գանձատուփ

1. *Բանաստեղծության մեկ տողի մեջ հոմանիշ բառեր կան: Գտի՛ր դրանք:*

2. *Հոմանիշ բառերը դեմ դիմաց գրիր:*

զավակ	*գույնզգույն*
խայտաբղետ	*շոգ*
տապ	*առույգ*
կայտառ	*թռչկոտել*
ցատկոտել	*որդի*

3. *Կարդա՛ բանաստեղծությունը և որոշի՛ր, թե ի՞նչ են նշանակում աշխարհ գալ և խոսք բացել բառակապակցությունները:*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Բանաստեղծության մեջ աղբյուրներն ինչերի՞ հետ են համեմատվում:*

2. *Իրենց ճանապարհին աղբյուրներն ի՞նչ հանդիպումներ են ունենում:*

3. *Աղբյուրներն ինչպե՞ս են ծիծաղում:*

4. *Բանաստեղծության մեջ գտի՛ր հոգնակի գոյականները և լրացրու՛ աղյուսակը:*

-եր վերջավորությամբ բառեր	-ներ վերջավորությամբ բառեր

Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. *Արագածի մասին ինչ կարող ես պատմել:*
2. *Հրաշք աղբյուրի մասին մի հեքիաթ հորինիր:*

Իմաստունի օրատետրից

Արագած

Արագածը Հայաստանի հանրապետության ամենաբարձր լեռն է (4090մ), հայկական լեռնաշխարհում՝ չորրորդը: Լեռը մեծ տարածք է զբաղեցնում:

Արագածից են սկիզբ առնում Արագած, Ամբերդ, Մանթաշ, Գեղարքուր, Ծաղկահովիտ և այլ գետակներ: Կան 100-ից ավելի լճեր: Դրանցից ամենախոշորը Քարի լիճն է, որը գտնվում է լեռան հարավային լանջին, 3200մ բարձրության վրա: Ջուրը պարզ է, մաքուր, սնվում է ձնհալքի ջրերից, ինչպես նաև ստորգետնյա աղբյուրներից:

Արագածը հարուստ է պատմական հուշարձաններով: Հարավային լանջին է գտնվում Ամբերդ ամրոցը: Հնագույն բնակավայրերից է Բյուրականը, որտեղ գտնվում է Բյուրականի աստղադիտարանը:

Դադարի պահ

Ըստ գույների բառակապակցություններ կազմիր ծիլ ու ծաղիկ կապակցության օրինակով:

ծառ ու

պար

թուփ

ծիծաղ

երգ ու

հաց ու

ծաղիկ

սար ու

ծափ ու

ձոր

պանիր

տաղ

Էդմոնդո դե Ամիչիս

ՓՈՔՐԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ 1

Մի անգամ Իսպանիայից դեպի Իտալիա ճանապարհվեց մի շոգենավ, որի վրա կային ֆրանսիացիներ, իտալացիներ, իսպանացիներ: Ուղևորների ամբոխի մեջ կարելի էր նկատել միայնակ, վատ հագնված տասնմեկամյա մի տղայի, որը վայրի գազանիկի նման մի կողմ էր քաշվել և մռայլ նայում էր շուրջբոլորը: Զարմանալի չէր, որ նա այդպես մռայլ էր նայում:

Երկու տարի առաջ հայրն ու մայրը՝ ծայրաստիճան աղքատ գյուղացիներ, նրան հանձնել էին թափառաշրջիկ կրկեսի տիրոջը: Տերը ծեծում ու կիսաքաղց էր պահում տղային, սովորեցնում զանազան ճպարարություններ: Հետո նրան տարավ Ֆրանսիա և Իսպանիա, որտեղ շարունակում էր ծեծել և կուշտ չկերակրել: Երբ տեսավ, որ այլևս հնարավոր չէ դիմանալ քաղցին ու ծեծին, քաղաք հասնելուն պես տղան փախավ իրեն ճնշողից և ներկայացավ իտալական դեսպանին՝ օգնություն խնդրելու:

Տղայի պատմությունից ու տեսքից ազդված՝ դեսպանը երեխային նստեցրեց Իտալիա մեկնող շոգենավ և ձեռքը տվեց մի նամակ՝ ուղղված ոստիկանության պետին: Նա երեխային պետք է հանձներ ծնողներին: Խեղճ տղան ցնցոտիների մեջ էր: Նրան մահճակալ հատկացրին ընդհանուր նավասենյակում: Ուղևորները նրան նայում էին մեծ հետաքրքրությամբ,

ոմանք փորձում էին հարցուփորձ անել, բայց նա չէր պատասխանում, կարծես արհամարհում ու ատում էր բոլորին. զրկանքներն ու ծեծն էին նրան այդպես ընկճված ու տխուր դարձրել: Ուղևորներից երեքին հաջողվեց հարկադրել, որ նա խոսի. տղան կցկտուր պատմեց իր պատմությունը:

Թեպետ և այդ երեք ճամփորդներն իտալացիներ չէին, բայց հասկացան նրան և մասամբ խղճահարությունից, մասամբ էլ նրանից, որ գինին նրանց տրամադրությունը բարձրացրել էր, տղային մի քանի մետաղադրամ տվեցին: Նրանք կատակում ու հրահրում էին տղային, որ էլի բաներ պատմի: Եվ քանի որ այդ ժամանակ նրանց էին մոտեցել ուրիշ ուղևորներ ևս, իրենց առատաձեռն ցույց տալու համար նրանք զրնգոցով նորից սեղանին էին նետում դրամներ՝ ասելով. «Ահա՛, վերցրո՛ւ»: Տղան վերցնում ու գրպանն էր դնում դրամները՝ կիսաձայն շնորհակալություն ասելով: Նա շարունակում էր զուսպ մնալ, միայն աչքերն էին պայծառացել ջերմ ժպիտից: Ապա բարձրացավ իր մահճակալին, վարագույրը քաշեց ու լռեց. միտք էր անում, թե ի՞նչ պետք է անի այդ դրամը:

ուղևոր
հարցուփորձ
կցկտուր

Իմաստախոսություն

Օտար երկիրը հայրենիք չի դառնա:

Բառերի գանձատուփ

1. *Ցնցոտի, ընկճվել, ազդվել, աճպարարություն բառերը բաց թողնված ո՞ր տեղերում պիտի գրվեն:*

ա) *Երբ մեկը որևէ դեպքից կամ պատմությունից հուզվում է, ասում են ..... է:*

բ) *Տեսնել ես, թե մարդիկ ինչպես են ձեռքերի արագ շարժումներով զանազան ճարպիկ և անհավատալի հնարքներ ցույց տալիս: Դա ..... է:*

գ) *Մաշված, պատառոտված հագուստը ..... են անվանում:*

դ) *Երբ որևէ մեկը հոգսերից խեղճացած կամ հուսահատված է, ասում են՝ ..... է:*

2. *Ընտրի՛ր և դեմ դիմաց գրիր հոմանիշ բառերը։*

հրահրել	*տխուր*
հարկադրել	*խոշոր, հսկայական*
թախծոտ	*խոժոռ*
մեծ	*գրգռել, դրդել*
մռայլ	*ստիպել, պարտադրել*

3. *Ընդ նախածանցով բառեր կազմիր։ Նմուշ՝ ընդհանուր։*

4. *Շարունակի՛ր՝ բառերն ընտրելով տեքստում կապույտ գրվածներից։ Ուշադրությու՛ն դարձրու բառերին արտասանությանը և գրությանը։*

Նմուշ՝ արհամարհել - շնորհակալություն, ճանապարհվել (ր-ից հետո հ է գրվում, որը թույլ է արտասանվում)։

ա) *հագնել, ……* **բ)** *կեղտոտ …..,* **գ)** *բարձրացնել ……։*

5. *Կրկեսի տիրոջը բնութագրելու համար հատկանիշ և գործողություն ցույց տվող բառեր գրիր։*

Նմուշ՝ (ինչպիսի՞) …… մարդ, որը (ի՞նչ էր անում) ……։

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Ո՞րն էր տղայի հայրենիքը։ Ինչի՞ց իմացար։*

2. *Ի՞նչ ազգերի ներկայացուցիչներ էին շոգենավի ուղևորները։*

3. *Նավի վրա տղան ինչու՞ էր մռայլ։*

4. *Տղան ո՞ր երկրներում էր եղել։*

5. *Շոգենավ նստելու համար ո՞վ օգնեց տղային։*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Երբևէ ճամփորդե՞լ ես, պատմի՛ր։*

2. *Մի պատմությու՛ն հորինիր «Երբ ես նավապետ էի» կամ «Կախարդական գորգի վրա» վերնագրով։*

ՓՈՔՐԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ 2

Ամբողջ երկու տարի նա կուշտ հաց չէր կերել, իսկ այժմ շոգենավի վրա կարող էր կշտացնող մի կերակուր ուտել: Հետո, երբ հայրենիքում ափ իջներ, կազատվեր ցնցոտիներից ու նոր հագուստ կգներ: Եվ վերջապես, երբ այդքան փող տաներ տուն, հայրն ու մայրը թերևս այնքան խիստ չէին դիմավորի նրան, որքան եթե դատարկ գրպանով հայտնվեր: Ստացած փողը նրա համար մի ամբողջ կարողություն էր: Մինչ խորհում էր այդ մասին, այն երեք ուղևորները, նավասենյակի ճաշասեղանի շուրջը նստած, շարունակում էին զրուցել: Նրանք գինի էին խմում ու խոսում իրենց ճամփորդություններից, այն երկրներից, որտեղ եղել էին և խոսքից խոսք անցնելով՝ հասան Իտալիային:

Մեկն սկսեց գանգատվել նրա հյուրանոցներից, մյուսը՝ երկաթգծից, իսկ հետո բոլորը միասին տաքացան ու սկսեցին հայհոյել մնացած ամեն ինչը: Մեկն ասաց, թե գերադասում է ճամփորդել ուրիշ երկրներում, մյուսը հայտարարեց, թե Իտալիայում հանդիպել է միայն խաբեբաների ու ավազակների, երրորդն ավելացրեց, թե իտալացի ծառայողներն անգրագետ են:

- Անկիրթ ժողովուրդ է,- հաստատեց առաջինը:

- Կեղտոտ,- ավելացրեց երկրորդը:

- Գո...,- բացականչեց երրորդը: Նա ուզում էր ասել «գողեր են», բայց չհասցրեց խոսքն ավարտել. մետաղադրամների կար-

կուտ թափվեց զրուցակիցների գլուխներին և ուսերին: Զրնգոցով սեղանին դիպչելով՝ դրամները ցած գլորվեցին: Երեքը զայրացած վեր թռան տեղներից, նայեցին վերև և մի բուռ դրամ ուղիղ երեսներին ստացան:

- Հեռ վերցրեք ձեր փողերը,- արհամարհանքով ասաց տղան՝ ցած կախվելով վարագույրի հետևից,- ես ողորմություն չեմ վերցնում նրանցից, ովքեր վատաբանում են իմ հայրենիքը:

իջնել
ճամփորդություն
խաբեբա
արհամարհանք

Բմաստախոսություն

Նետերը խոցում են մարմինը, իսկ չար խոսքերը՝ հոգին:

Բառերի գանձատուփ

1. *Կարողություն նշանակում է «որևէ բան անելու ուժ, հնարավորություն» և «հարստություն»: Բառը պատմվածքի մեջ ո՞ր իմաստով է գործածվել (Ստացած փողը նրա համար մի ամբողջ կարողություն էր):*

2. *Ընտրի՛ր և դեմ դիմա՛ց գրիր հոմանիշ բառերը:*

գանգատվել	*չարախոսել, բամբասել, անարգել*
դիպչել	*վերջացնել*
վատաբանել	*կպչել, զարկվել*
զայրանալ	*բարկանալ, ջղայնանալ*
ավարտել	*դժգոհել, բողոքել*

3. *Փորձի՛ր բացատրել մետաղադրամների կարկուտ և դատարկ գրպանով արտահայտությունները:*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Ինչպե՞ս կգնահատես տղայի արարքը: Իսկ դու՞ ինչպես կվարվեիր, եթե նրա տեղում լինեիր:*

2. *Տեքստից դու՛րս գրիր իտալացի տղային բնութագրող 4-5 բառ կամ արտահայտություն։*

3. *Տղային ինչպե՞ս ես պատկերացնում. նկարագրի՛ր։*

4. *Ի՞նչ ես կարծում, հեղինակն ինչպե՞ս է վերաբերվում տղային և նրա արարքին։*

5. *Տեքստը բաժանի՛ր մասերի և դրանք վերնագրի՛ր։*

6. *Գրի՛ր գիծ, գլուխ, երկիր, ժողովուրդ գոյականների՝ ինչի՞ հարցին պատասխանող ձևերը։ Նմուշ՝ ձեռագիր - (ինչի՞) ձեռագրի։*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Ընկերներիդ հետ քննարկի՛ր դեսպանի և երեք ճանապարհորդների արարքները։ Լսի՛ր ընկերներիդ և հայտնի՛ր քո կարծիքը։*

2. *Պատմության համար ուրիշ ավա՛րտ մտածիր։*

Լեզվաբանի դասը

«Փոքրիկ հայրենասերը» պատմվածքի առաջին մասում տղա բառը տարբեր ձևերով է գործածվել։ Գտի՛ր դրանք և դո՛ւրս գրիր։

Գոյականի ձևային փոփոխությունները

Գոյականները նախադասության մեջ տարբեր ձևափոխությունների են ենթարկվում։ Այսպես։

Հայաստանը հայերի հայրենիքն է։

Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է։

Հայաստանին է կապված իմ սիրտը։

Ես սիրում եմ Հայաստանը։

Հայաստանից աշխարհի տարբեր երկրներ հանքային ջուր է արտահանվում։

Հայաստանով է անցել նշանավոր ճանապարհորդի ճամփան։

Հայաստանում ապրում են հայեր, եզդիներ, ռուսներ, ասորիներ, հույներ։

Այդ ձևերից յուրաքանչյուրը տարբեր դեր ունի նախադասության մեջ և տարբեր հարցերի է պատասխանում։

Հովհաննես Թումանյան

Ա՜Խ, ԻՆՉ ԼԱՎ ԵՆ ՍԱՐԻ ՎՐԱ...

Ա՜խ, ինչ լավ են սարի վրա
Անցնում օրերն անո՛ւշ, անո՛ւշ,
Անրջային, թեթևասահ,
Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ։

Ահա բացվեց թարմ առավոտ,
Վարդ է թափվում սարին-քարին,
Ծաղ են շողում ծաղիկ ու խոտ,
Ծնչում բուրմունք եղեմային։

Ա՜խ, ինչ հեշտ են սարի վրա
Սահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ,
Ծվին փչեց հովիվն ահա -
Աղջիկն ու սերն անո՛ւշ, անո՛ւշ։

թեթևասահ
ամպ
վարդ

Հանելուկներ

Ամեն առավոտ
Գոհար շուրթերով
Տալիս է ծաղկանց
Համբույրը իր զով։

Ցնցուղի պես
Փեշը բաց անում,
Ձոր ու հանդեր է
Հեռվից թաց անում։

Գիպունիկ զան, բանաստեղծության մեջ երկու անհասկանալի բառ կա՝ անրջային և եղեմական։ Դրանք ականջիս մեղեդու նման են հնչում։

Ինչուիկ զան, այդ բառերը սովորաբար բանաստեղծություններում են հանդիպում։ Անուրջ նշանակում է «հաճելի երազ»։ Հեշտությամբ կարող ենք եզրակացնել՝ անրջային, այսինքն՝ երազային։

Եղեմ բառը դրախտ-ի հոմանիշն է։ Պարզ է, չէ՞, որ եղեմական նշանակում է «դրախտային»։

Բառերի գանձատուփ

1. **ա)** *Համեմատիր հոտ և բուրմունք բառերը: Իմաստային ինչ տարբերություն կա նրանց միջև:*

բ) *Հոտ և բույր կամ բուրմունք բառերով երկուական բառակապակցություն կազմիր:*

2. *Ինչը կարող է թարմ լինել:*

3. *Ինչը կամ ով կարող է սահել:*

4. *Քո բառերով բացատրիր, թե ինչ է շաղը:*

5. *Ծվի փչել, դաշնամուր նվագել և թմբուկ զարկել բառակապակցություններով մեկական նախադասություն կազմիր:*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Քո կարծիքով տարվա որ եղանակն է նկարագրված բանաստեղծության մեջ:*

2. *Այս բանաստեղծությունը երգվում է (երաժշտության հեղինակը ևս Հովի. Թումանյանն է): Ո՞ր բառերն են մեղեդային դարձնում բանաստեղծությունը: Սովորիր երգել այս երգը:*

3. *Ուրիշ բանաստեղծություն գտիր, որի հիման վրա երգ է գրվել: Եթե կարող ես, երգիր:*

4. *Ինչ գույներ ես տեսնում, երբ արտասանում (կամ երգում) ես այս բանաստեղծությունը:*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Սարի վրա երբևէ եղել ես: Պատմիր այդ մասին:*

2. *Հովհաննես Թումանյանի մասին ինչ գիտես: Պատմիր:*

Դադարի պահ

Կարդա՛ միևնույն գույնն ունեցող բառերը՝ նրանց միջև ու դնելով:

ծառդաշտսարծափձործաղիկանտառծիծաղ

Ավետիք Իսահակյան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ 1

Աշնան մի պայծառ առավոտ էր. Արարատյան դաշտի հրաշագեղ աշունը։ Փայլում էին խաղողի ոսկեղեն ողկույզները, նուռն ու խնձորներն ասես հրեղեն գնդակներ լինեին։ Հուռթի այգիներից լիության անուշ բուրմունքն էր խնկում։ Վերևում՝ բաց կապույտում, հավքերի շղթան էր ձգվում, ներքևում ցողապատ արահետներով հայ գեղջուկի սայլերն ու ձիերն էին անցնում՝ բարձած աշնան հազար ու մեկ բերքերով։

Երկու ընկերով գնում էինք հինավուրց Արմավիրի բլրի տակով։ Մեր գլխի վրա ծփում էր սոսիների խորհրդավոր սոսափը։ Երկուսս էլ լուռ էինք, տարված մեր մտքերով։

Քայլում էինք դեպի մի գյուղ՝ Երասխի ձախ ափին։

Սքանչելի է Արարատյան դաշտը։

Մասիսն ուղղակի դիմացներս էր. այնպես պարզ ու վճիտ էր, որ նրա ոտքերից մինչև գագաթը մեկ-մեկ կարելի էր դիտել։ Մի հսկա սպիտակաբաշ առյուծի է նման նա՝ նստած հետևի ոտքերի վրա, ալևոր գլուխը անհունի մեջ, հանգիստ և անվրդով։

հուռթի
գեղջուկ
բարձել
հինավուրց
գաղտնի

Աշնան քաղցր ու մեղմ արևը Մասիսի վերից վար և Արարատյան երկրի վրա իր ծիրանին էր փռել։ Երեկոյան կողմ մտանք գյուղ։

Հաջորդ օրը՝ մեկնելուց առաջ, գնացինք գյուղական գաղտնի դպրոցը։ Ուսուցչի հետ արդեն երեկոյան ծանոթացել էինք. նա նույն գյուղից մի կրակոտ երիտասարդ էր։

Ցարական կառավարությունը փակել էր հայկական դպրոց-

ները։ Հայ ժողովուրդը զրկվել էր ազգային կրթություն ստանալու հնարավորություններից։ Հայ հայրենասեր անհատները մտածում էին որքան հնարավոր է հակազդել պետական քաղաքականությանը։ Հայկական գավառներում սկսեցին համեստ միջոցներով գործել գաղտնի դպրոցներ։

տարրական խորհրդավոր ուղղակի քաղցր անվրդով

Նախկին դպրոցների ուսուցիչներից ոմանք մնացին իրենց գյուղերում՝ նվիրվելով մանուկ սերնդի ազգային կրթությանը։ Նրանք սովորեցնում էին գրել-կարդալ և թվաբանություն։ Հետագայում այդ տարրական դպրոցների թիվը մեծացավ։

Այդպիսի դպրոցներից մեկն էր, որ մենք այցելեցինք։

Արաքսի ափին՝ հաստաբուն ընկուզենու տակ, հասարակ նստարանների վրա խումբ-խումբ տեղավորվել էին բավական մեծ թվով մանուկներ և պատանիներ։

Ասույթ

Իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տարվում է ամեն մի պատահական քամուց։

Ստեփան Զորյան (հայ գրող)

Բառերի գանձատուփ

1. *Բացատրի՛ր ոսկեղեն ողկույզներ ու նռան և խնձորի հրեղեն գնդակներ կապակցությունների մեջ գործածված ոսկեղեն և հրեղեն բառերը։ Այդ բառերով մեկական բառակապակցությունն կազմիր։*

2. *Հուռթի այգիներից լիության անուշ բուրմունքն էր խնկում նախադասության մեջ մի բառ հոմանիշ է պտղաբեր, բերքառատ, փարթամ, բարեբեր բառերին։ Ո՞րն է այն։*

3. *Գեղջուկ բառը նշանակում է «գյուղացի»։ Մի բառով ինչպե՞ս կասես գյուղացի կին։*

4. *Վճիտ բառի երկու հոմանի՛շ ասա։ Դրանցից յուրաքանչյուրով մեկական նախադասությունն կազմիր։*

Սիրելի՛ Գիրեմնիկ
Աղնան արևը Արարատյան երկրի վրա իր ծիրանին էր փռել նախադասության մեջ ինչ պարմայնում է ծիրանի բառը: Ծիրանի հետ կապ կա՞:

Սիրելի՛ Ինչուհի
Ծիրանի բառը նշանակում է «կարմիր», «ծիրանագույն», այսինքն՝ ծիրանի գույն: Ծիրանի է կոչվում նաև անթևք ղժեղ թիկնոցը՝ վերնապգեստը, որ կայսրերը, թագավորները հագնում էին հանդիսավոր արարողությունների ժամանակ: Ինչու՞ է այդպես կոչվում: Որովհետև այն ծիրանագույն էր լինում:

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Պատմվածքում նկարագրված ժամանակաշրջանում Հայաստանն անկախ էր: Ո՞ր նախադասության միջոցով կարող ես հիմնավորել կարծիքդ:*

2. *Պատմվածքում Մասիսն ինչպիսին է:*

3. *Գաղտնի գործող հայկական դպրոցներում ովքե՞ր էին ուսուցիչ դառնում:*

4. *Քո բառերով արտահայտի՛ր Վերևում՝ բաց կապույտում, հավքերի շղթան էր ձգվում նախադասության միտքը:*

5. **ա)** *Ի՞նչ հարցերի են պատասխանում ընկուզենի, ընկուզենու, ընկուզենուց ձևերը:*

բ) *Գրի՛ր ոսկի և ոզնի գոյականների՝ նույն հարցերին պատասխանող ձևերը:*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Կրկին կարդա՛ Արարատյան դաշտի նկարագրությունը: Պատմի՛ր քո բառերով՝ լրացնելով տարբեր տեղեկություններով:*

2. *Մասիսի կամ ուրիշ լեռան մասին մի ավանդությու՛ն պատմիր:*

Ավետիք Իսահակյան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ 2

Օրը կիրակի էր։ Գյուղը հանգստանում էր դաշտային աշխատանքներից, և այդ պատճառով դպրոցը լիքն էր աշակերտներով։ Դպրոցը միայն մի ուսուցիչ ուներ, բայց ուսուցչի եռանդը հասնում էր ամեն տեղ։ Մի խումբ «այբ ու բեն» էր սովորում, մյուս խմբում «Մայրենի լեզու» էին կարդում, երրորդ խմբում հայոց պատմությունից էին դաս պատասխանում, մի ուրիշ խմբում «Դավիթ Բեկ» էին կարդում։

Երբ դասը վերջացավ, ու աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ երգ շատ էր սիրում, խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի երգ երգեն։ Ուսուցիչը պատասխանեց, թե ինքը, դժբախտաբար, «բաղաձայն» է և դրա համար էլ երգ չի սովորեցրել, սակայն ավելացրեց, որ աշակերտների մեջ երգողներ կան։

- Լավ կլինի բոլորը գոնե մի ընդհանուր ազգային երգ գիտենան. օրինակ՝ «Մայր Արաքսի»-ն, որ շա́տ տեղին է, հենց նրա ափին ենք,- ասաց ընկերս։

Ուսուցիչը մի պահ մտածելուց հետո դարձավ աշակերտներին.

- Հապա՛, սիրելինե՛րս, ամենքդ շարվեցե՛ք այստեղ։

Հետո դառնալով մեզ՝ ավելացրեց.

- Ինչպե՞ս չէ, գիտեն և լա́վը գիտեն։

Ու ձեռքի քանոնը վեր բարձրացնելով՝ գոչեց.

- Բոլորդ միասին ինձ հետ երգեցե՛ք՝ «Այբ-բեն-գիմ»։ Չէ՞ որ բոլորիդ անգիր սովորեցրել եմ։ Դե՛հ, այսպես։

Եվ քանոնի համաչափ շարժումներին ներդաշնակ՝ բոլորը, հետևելով ուսուցչին, սկսեցին բարձր և երգեցիկ ձայնով հեգել.

Այբ, բեն, գիմ,
Դա, եչ, զա,
Է, ըթ, թո...

երրորդ կուրծք հուժկու անպատճառ

Այսպես մինչև վերջ։ Քառասուն-հիսուն կրծքից բխած այս հուժկու, բազմահնչյուն և միահամուռ ձայնը, որ ինքնին հայոց լեզուն է, Երասխի շառաչի հետ փռվելով Արարատյան աշխարհի վրա, թվում էր, թե սլանում է ազատ Մասիսն ի վեր։

Ամենքի երեսին պայծառ ժպիտ կար. ուսուցիչը շատ ոգևորված էր։

- Ահա՛ ձեզ մի ընդհանուր ազգային երգ, որ ամեն հայ անպատճառ պետք է գիտենա։ Ահա չորս-հինգ տարի է՝ ես այդ երգն եմ սովորեցրել, ուրիշ երգ չեմ ճանաչում...,- բոցավառ շրթունքներով շնչասպառ ասաց ուսուցիչը և սրբեց քրտնած ճակատը։

- Շատ ճիշտ եք ասում և կեցցե՛ք, իսկապես որ աննման էր,- ոչ նվազ ոգևորությամբ պատասխանեցինք մենք։

Ապա մեր շնորհակալությունը հայտնելով՝ ամուր սեղմեցինք հնարամիտ ուսուցչի ձեռքը և ուրախ ու թեթև շարունակեցինք մեր ուղին։

Մի պահ գտնվում էինք այդ տարօրինակ երգի ազդեցության տակ։ Ընկերս խզեց լռությունը.

- Համաձայն չե՞ս, որ քանի հայն ապրում է, հայոց «այբ-բեն»-ը չի մեռնի։

- Այո՛,- ասացի,- բայց ես հակառակին ավելի համաձայն եմ. քանի հայոց «այբ-բեն»-ը ապրում է, հայը չի՛ մեռնի...

Ասույթ

Իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է հայոց լեզվին տիրապետելը։

Վիկտոր Համբարձումյան (աշխարհահռչակ աստղագետ)

Բառերի գանձատուփ

1. *Ցուց տուր գյուղական, ազգային բառերի արմատները և ածանցները: Յուրաքանչյուր ածանցով երեք բառ կազմիր:*

2. *Գրիր ուրիշ, վերջանալ, խնդրել, գոչել և հուժկու բառերի հոմանիշները:*

3. *Գրիր միասին, դժբախտաբար, ճիշտ, ուրախ և թեթև բառերի հականիշները:*

4. *Ուսուցիչը պատասխանեց, թե ինքը, դժբախտաբար «բաղաձայն» է նախադասության մեջ ինչ է նշանակում չակերտներում գրված բառը:*

Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. *Ազգային ինչ երգ երգեցին երեխաները:*

2. *Հեղինակը երեխաների երգածն ինչու՞ է «տարօրինակ երգ» անվանում:*

3. *Քո բառերով նկարագրիր գյուղական դպրոցը, երիտասարդ ուսուցչին և երեխաներին:*

4. *Ո՞րն է պատմվածքի հիմնական միտքը:*

5. *Քո կարծիքով իր պատմության ընթացքում հայ ժողովուրդն ինչի՞ շնորհիվ է հաղթանակներ տարել: Կարծիքդ հիմնավորիր:*

6. *Գրիր լավ, ուրախ, պայծառ, թեթև ածականների համեմատության աստիճանները:*

Պատմությունների և զրույցների զամբյուղ

1. *Գրավոր նկարագրիր քո ուսուցչին:*

2. *Ներկայացրու՛ քո սիրած բանաստեղծությունը կամ երգը, հեղինակի և ստեղծագործության մասին տեղեկություններ հաղորդիր ընկերներիդ:*

Լեզվաբանի դասը

Կարդա՛ «Ազգային երգը» պատմվածքի առաջին մաը և ցո՛ւյց տուր այն բառերը, որոնք ինչպիսի՞ հարցին են պատասխանում:

Ածական. համեմատության աստիճանները

Առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը կոչվում են ածականներ:

Ածականները պատասխանում են ինչպիսի՞ և ո՞ր հարցերին: Օրինակ՝ քաղցր (խաղող), փայլուն (աստղ), մեծ (գյուղ), դաշտային (ծաղիկ), հայկական (երգ) և այլն:

Որոշ ածականների ցույց տված հատկանիշը տարբեր առարկաների մեջ տարբեր չափով է լինում: Օրինակ՝ Երկնքում մի աստղը կարող է ավելի փայլուն լինել, քան մյուսը: Կարելի է տեսնել նաև երկնքի ամենափայլուն աստղը:

Հատկանիշի տարբեր չափը ցույց ենք տալիս ածականի համեմատության աստիճանների միջոցով. մեծ - ավելի մեծ - ամենամեծ, քաղցր - ավելի քաղցր - ամենաքաղցր:

Իմաստունի օրատետրից

Հայաստանի Հանրապետության օրհներգը

Բոլոր պետություններն ունեն պետական օրհներգ (այն հանդիսավոր երգ է): Օրհներգը, ինչպես դրոշը և զինանշանը, պետության պաշտոնական խորհրդանիշն է:

Հայաստանի Հանրապետության օրհներգի բառերը գրել է բանաստեղծ Միքայել Նալբանդյանը, երաժշտական մշակումը կատարել է երգահան Բարսեղ Կանաչյանը:

Դադարի պահ

Հայ երգի Մեսրոպ Մաշտոց

Կոմիտաս

Իմ տեղեկատուն 1

Բազմիմաստ են կոչվում այն բառերը, որոնք մեկից ավելի իմաստներ են արտահայտում:	մեծ 1. «խոշոր» (մեծ քար), 2. «նշանավոր, անվանի» (մեծ գրող)
Ուղիղ իմաստ է կոչվում բառի հիմնական՝ սովորական իմաստը:	ոսկի «դեղին գույնի թանկարժեք մետաղ»
Փոխաբերական իմաստ է կոչվում բառի ոչ սովորական իմաստը:	ոսկի «ազնիվ, լավ» Պետրոսը ոսկի մարդ է:
Հոմանիշ են կոչվում մոտ իմաստ արտահայտող բառերը:	փայլել – շողալ
Հականիշ են կոչվում հակառակ իմաստ արտահայտող բառերը:	թեթև – ծանր
Բառի բաղադրիչներ են կոչվում բառը կազմող մասերը՝ արմատը և ածանցը:	համաշխարհային համ/աշխարհ/այի՛ն
Արմատ է կոչվում բառի հիմնական իմաստն արտահայտող մասը:	հյուր, հյուրանոց, հյուրասեր
Ածանց է կոչվում այն մասնիկը, որը միանում է բառի սկզբից կամ վերջից և նոր իմաստ է տալիս բառին:	դժգույն, գունավոր
Նախածանցը բառի սկզբից ավելացող ածանցն է:	անօգուտ
Վերջածանցը բառի վերջից ավելացող ածանցն է:	դասարան
Հոդակապը բառի տարբեր մասերն իրար միացնող ա ձայնավորն է:	զարդատուփ
Պարզ են կոչվում այն բառերը, որոնք կազմված են միայն մեկ արմատից:	մարդ, օր, արև, ծառ, լույս
Բարդ են կոչվում այն բառերը, որոնք կազմված են մեկից ավելի արմատներից:	ծովափ (ծով+ափ) խաղաղաշտ (խաղ+դաշտ)
Ածանցավոր են կոչվում այն բառերը, որոնք կազմված են արմատից և մեկ կամ ավելի ածանցներից:	անվախ (ան+վախ), քույրիկ (քույր+իկ), դժգոհություն (դժ+գոհ+ություն)

Բարդ ածանցավոր են կոչվում այն բառերը, որոնք կազմված են մեկից ավելի արմատներից և առնվազն մեկ ածանցից:	մայրաքաղաքային (մայր + քաղաք+ային)
Գոյական են կոչվում առարկա (անձ, իր, կենդանի, երևույթ) ցույց տվող բառերը:	մարդ, Տիգրան, գիրք, ձի, անձրև
Հասարակ անուն է կոչվում միատեսակ բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անունը:	քաղաք, բնակիչ, շուն, քամի
Հատուկ անուն է կոչվում միատեսակ առարկաներից ամեն մեկին տրվող առանձին անունը: Հատուկ անունները գրվում են մեծատառով:	Երևան, Օշական, Վարդան Մամիկոնյան, Շեկո
Անձ ցույց տվող գոյականներ են կոչվում ո՞վ հարցին պատասխանող գոյականները: Սրանք մարդկանց հատուկ և հասարակ անուններն են:	տղա, աղջիկ, բժիշկ, վարորդ, Մեսրոպ, Այծեմնիկ, Թումանյան
Իր ցույց տվող գոյականներ են կոչվում ի՞նչ հարցին պատասխանող գոյականները: Սրանք իրեր, երևույթներ և կենդանիներ անվանող գոյականներն են:	գիրրք, անձրև, կատու, ձի
Գոյականի եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա:	վարդ, երեխա, գառ
Գոյականի հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի միատեսակ առարկաներ:	վարդեր, երեխաներ, գառներ
Նախադասության մեջ գոյականը տարբեր ձևափոխությունների է ենթարկվում:	քաղաք, քաղաքը, քաղաքի, քաղաքին, քաղաքից, քաղաքով, քաղաքում
Ածական են կոչվում առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը:	կարմիր, քարե
Ածականի համեմատության աստիճանները ցույց են տալիս նույն հատկանիշի տարբեր չափը առարկաների մեջ:	մեծ, ավելի մեծ, ամենամեծ

Թվական են կոչվում առարկաների թիվ և թվային կարգ (հերթականություն) ցույց տվող բառերը:	երկու, քսանչորս, հարյուր մեկ, երկրորդ, չորրորդ, հինգերորդ
Բայ են կոչվում գործողություն ցույց տվող բառերը:	երազել, խաղալ
Բայը ցույց է տալիս խոսողի, խոսակցի կամ մի ուրիշ առարկայի կատարած գործողություն և ունի առաջին, երկրորդ և երրորդ դեմք:	սովորում եմ սովորում ես սովորում է
Բայի եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկայի կատարած գործողություն:	գրում եմ, գնալու ես, ժպտաց
Բայի հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի առարկաների կատարած գործողություն:	գրում ենք, գնալու եք, ժպտացին
Ներկա ժամանակը ցույց է տալիս խոսելու պահին կատարվող գործողություն:	սովորում եմ, սովորում ենք
Անցյալ ժամանակը ցույց է տալիս խոսելուց առաջ կատարված գործողություն:	սովորել եմ, սովորեցիք, սովորում էին, տեսան
Ապառնի ժամանակը ցույց է տալիս խոսելուց հետո կատարվելիք գործողություն:	սովորելու եմ, կսովորեն, պիտի սովորեք
Օժանդակ բայը մասնակցում է բայի տարբեր ձևերի կազմությանը: Ունի ներկա և անցյալ ժամանակներ, եզակի և հոգնակի թիվ, դրական և ժխտական ձևեր:	հարգում եմ, տեսնելու ես, ժպտում է, կատակում էի, հարցրել էիր, կանչելու էր, չեմ խոսում, չես գնալու, չի հիշում, չէինք կատակում
Բայի դրական ձևերը ցույց են տալիս, որ գործողությունը կատարվել է, կատարվում է կամ կատարվելու է:	կանչել եմ, կանչում ես, կանչելու են, կանչեցին, կանչեն, կկանչեն, պիտի կանչեն
Բայի ժխտական ձևերը ցույց են տալիս, որ գործողությունը չի կատարվել, չի կատարվում կամ չի կատարվելու:	չեմ կանչել, չես կանչում, չեն կանչելու, չկանչեցին, չկանչեն, չպիտի կանչեն, մի՛ կանչիր

Բառակապակցությունը առարկա և հատկանիշ կամ գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերի կապակցություն է:	կապույտ երկինք ուշադիր կարդալ
Դարձվածք է կոչվում այն կայուն բառակապակցությունը, որի իմաստն ուղղակի կապ չունի այդ բառակապակցությունը կազմող բառերի իմաստների հետ:	գլխի ընկնել «կռահել, հասկանալ», աշխարհով մեկ լինել «շատ ուրախանալ, ցնծալ»
Նախադասությունը ցույց է տալիս առարկան և նրա կատարած գործողությունը:	Ճնճղուկը ծլվլում է: Պապիկը թերթ է կարդում:
Նախադասության գլխավոր անդամներն են ենթական և ստորոգյալը: Ենթական ցույց է տալիս գործողություն կատարող առարկան: Ստորոգյալը ցույց է տալիս ենթակայի կատարած գործողությունը:	Ճնճղուկը ծլվլում է: Պապիկը կարդում է:
Կոչական է կոչվում այն բառը, որ ցույց է տալիս, թե ո՛ւմ կամ ինչի՞ն է ուղղվում խոսքը:	Արտա՛կ, օգնի՛ր ընկերոջդ: Առվա՛կ, այսօր ինչու՞ ես այդքան ուրախ:
Պարզ համառոտ նախադասությունը կազմված է միայն ենթակայից և ստորոգյալից:	Թռչունները երգում են: Տատիկը ժպտում է:
Պարզ ընդարձակ նախադասությունը կազմված է ենթակայից, ստորոգյալից և այլ բառից կամ բառերից:	Թռչուններն ուրախ երգում են: Իմ տատիկը մեղմ ժպտում է:
Պատմողական է այն նախադասությունը, որով ինչ-որ բան են պատմում:	Իմ ընկերը հաղթել է նկարիչների մրցույթում:
Հարցական է այն նախադասությունը, որով հարցնում են մի բանի մասին:	Հայաստանը քանի՞ մարզ ունի:
Հրամայական է այն նախադասությունը, որով հրամայում, խնդրում կամ հանձնարարում են մի բան անել:	Պատմի՛ր քո սիրած հեքիաթը:
Բացականչական է այն նախադասությունը, որով ուրախությունը, տխրությունը, ցավն արտահայտում են բացականչությամբ:	Ինչ ուրախ էին օրերը Սևանի ափին:

Իմ տեղեկատուն 2

Հանելուկը մի քանի տողով նկարագրում է առարկան կամ երևույթը՝ առանց անունը տալու, և այդ նկարագրությունից մարդիկ գուշակում են առարկայի անունը։

Հանելուկները լինում են ժողովրդական և հեղինակային։

Առածն ու **ասացվածքը** խոր իմաստ ունեցող խրատական կարճ արտահայտություններ են, որոնք սովորեցնում են լինել ազնիվ, բարի, խելացի, հայրենասեր, ծնողասեր, աշխատասեր և այլն։ Առածներն ու ասացվածքները ստեղծել է ժողովուրդը։ Օրինակներ՝ *Գյուղ կանգնի, գերան կկոտրի։ Հավատարիմ ընկերը գին չունի*։

Հեքիաթը բարի ու գեղեցիկ ավարտ ունեցող պատմություն է, որի մեջ մարդիկ արտահայտում են իրենց երազանքներն ու ազնիվ ցանկությունները։

Հեքիաթների հերոսներ են լինում մարդիկ, բույսերը, կենդանիները, երևակայական հրեշները, վիշապները։

Հին ժամանակներում հեքիաթները հորինել են սովորական մարդիկ և բանավոր պատմել իրար։ Այդպիսի հեքիաթները կոչվում են ժողովրդական, օրինակ՝ «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք» (հայկական), «Յոթ փայլուն աստղերը» (հնդկական)։

Հեքիաթներ են գրել նաև գրողները։ Դրանք կոչվում են հեղինակային հեքիաթներ։ Հայտնի հեքիաթագիրներ են Հովհ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Գրիմ եղբայրները, Անդերսենը, Պուշկինը։

Պատմվածքը ոչ ծավալուն ստեղծագործություն է, որի մեջ հեղինակը իրական դեպքեր է պատմում մարդկանց և կենդանիների կյանքից։ Օրինակ՝ Վ. Անանյան, «Որսորդի սիրտը»։

Ավանդությունը ոչ իրական պատմություն է, որի միջոցով մարդիկ փորձել են բացատրել, թե հնում ինչպես են առաջացել լեռներն ու ձորերը, ծովերն ու գետերը, ինչու՛ են քաղաքներին, գյուղերին, բերդերին ու վանքերին այդ անունները տվել և այլն։ Օրինակ՝ Հ. Խաչատրյան, «Ասք լավաշի մասին»։

Վիպերգը ժողովրդի կյանքի, թշնամիների դեմ նրա պայքարի, ազատասիրության և երազանքների մասին պատմող ստեղծագործություն է։ Վիպերգը ստեղծվել է հին ժամանակներում և առանձին հեղինակ չունի. այն ժողովրդական ստեղծագործություն է։ Աշխարհի շատ ժողովուրդներ իրենց վիպերգերն ունեն։

Հայկական վիպերգը կոչվում է «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ»։ Հետագայում գրողները մշակել են վիպերգերը և դրանց հիման վրա ստեղծագործություններ գրել, օրինակ՝ Հովհ. Թումանյան, «Սասունցի Դավիթ»։

Առակը ոչ ծավալուն ստեղծագործություն է, որը խրատում ու դաստիարակում է ընթերցողներին։ Նրա մեջ գովաբանվում են ազնվությունը, արդարությունը, համեստությունը, և այլն, ծաղրվում են պարծենկոտությունը, ծուլությունը, չարությունը և այլն։

Առակի հերոսներ են լինում կենդանիները, բույսերը, բնության երևույթները, որոնք հանդես են գալիս մարդկանց փոխարեն։ Օրինակ՝ Վարդան Այգեկցի, «Առյուծը, գայլը և աղվեսը», Մ. Կորյուն, «Սեխի թուփն ու ընկուզենին»։

Բանաստեղծությունը հատուկ ձևով՝ չափով գրված ստեղծագործություն է, որի մեջ հեղինակն արտահայտում է իր հույզերն ու մտքերը հայրենի երկրի, մարդկանց ու բնության մասին։ Օրինակ՝ Ս. Կապուտիկյան «Տղայիս»։

Ուղղագրական բառարան

աղջիկ
աղտոտել
աղքատ
Ամանոր
ամանորյա
ամբողջ
ամեն ինչ
ամպ
այդպես
այլևս
այծյամ
այսօր
անբիծ
անգամ
անդադար
անընդհատ
անպատճառ
անվերջ
անվրդով
անցորդ
անօգնական
անօգուտ
աշխարհ
աշխույժ
ապառաժ
առաջ
առաջին
առյուծ
առողջ
առջև
ասացվածք
ավագ
ավտոմեքենա
արգելել
արդար
արդեն
արդյոք
արթնանալ
արծիվ
արհամարհանք
արձագանք
արձակել
արձակուրդ
արձան
արյուն
արջ
արտասանել
արտասվել
արցունք
արև
արևելք
արևմուտք
բազկաթոռ
բախտ
բանալի
բարձ
բարձր
բարձունք
բարօրություն
բաց կապույտ
բերք
բզզոց
բռունցք
բույն
գաղտնիք
գգվել
գդալ
գեղջուկ
գյուղեգյուղ
գոգ
գոռգոռալ
գորշ
գրվածք
գցել
գունավոր
դադար
դաստիարակել
դարպաս
դդում
դեղձ
դեղորայք
դրախտ
եղբայր
եղջերու
եղջյուր
եղևնի
երբեմն
երբեք
երգ
երդում
երեսուն
երթ
երկրորդ
երջանիկ
երրորդ
զարդարել
զարթնել
զգույշ
զգուշություն
զեփյուռ
զմրուխտ
զուգել
էակ
ըմբոստ
ընդամենը
ընդարձակ
ընդդեմ
ընդհակառակը
ընդհանուր
ընդունակ
ընդունել
ընթերցել
ընթրիք
ընկուզենի
ընձուղտ
թագավոր
թախիծ
թախտ
թանկանալ
թաքցնել
թեթև
թերթ
թռչուն
թրջվել
թուղթ
թունավոր
ժայթքել
ժողովուրդ
իբր
իբրև
իննսուն
իննսունհինը
իջնել
իջևանատուն
ի վերջո
լվացք
լուսավոր
լուցկի
խաբեբա
խաբել
խախտել
խարույկ
խեղդել
խեղճ
խեցգետին
խիղճ
խնդրել
խշշալ
խոնարհ
խորդուբորդ
խորհել
խորհրդավոր
խորհուրդ
խրոխտ
խցկել
խփել
ծախսել
ծածկել
ծաղկեփունջ
ծարավ
ծիածան
ծոծրակ
կապուտաչյա
կարագ
կարգ
կարդալ
կեղծավոր
կենդանի
կեսգիշեր

կեսօր
կեցցե, կեցցես
կնձիթ
կողք
կորցնել
կրիա
կրծել
կցկտուր
կուրծք
հագնել
հագուստ
հակառակորդ
հաղթանակ
հաղթել
հաղորդել
համարձակ
համարյա
համբույր
համբուրել
հայացք
հանկարծակի
հաջորդ
հավաքել
հարձակում
հարյուր
հարցուփորձ
հարևան
հափշտակել
հեծկլտալ
հերթ
հեքիաթ
հիանալ
հինավուրց
հիսուն
հոգի
հոգնել
հոգս
հորթ
հպարտ
հրթիռ
հրձվանք
հուժկու
հուռթի
հևալ
հևիհև
ձագ
ձգել
ձյուն
ճամփորդ
ճանապարհ
ճանճ
ճեղք
ճկույթ
ճյուղ
մաթեմատիկա
մատյան
մարգարիտ
մարմարյա
մեղք
մեն-մենակ
մեջ
միանգամից
միմյանց
մինչև
միջև
միրգ
միևնույն
մխրճել
մղկտալ
մյուս
մնացորդ
մրջյուն
մրցել
մուգ կարմիր
յոթանասուն
յուրաքանչյուր
նախընտրել
նախշուն
նախքան
նախօրոք
նեղվածք
նրբաթերթ
նրբանցք
նուրբ
շաբաթ
շագանակ
շղթա
շյուղ
շնորհակալ
շնորհք
շոգ
շուրջբոլորը
ոգի
ողբալի
ողկույզ
ողջ
ողջույն
ոչխար
ոչ մի
ոչ ոք
ոռոգել
որդի
որովհետև
որպեսզի
որջ
որսորդ
որևէ
չէ
չորրորդ
պաշտպանել
պառկել
պատշգամբ
պարապմունք
պղպեղ
պողպատ
ջարդել
սաղարթ
սանդուղք
սարյակ
սեղմել
սերկևիլ
ստեղծել
սուրբ
սփոփել
սևանալ
վագր
վազք
վաթսուն
վախկոտ
վախճան
վայրէջք
վարդ
վերադարձ
վերելք
վերջ
վերջիվերջո
վերք
վրձին
տախտակ
տասնմեկ
տարերք
տարեցտարի
տարրական
տարօրինակ
տիեզերք
տնօրեն
ռոպե
ութսուն
ուղեկցել
ուղիղ
ուղղակի
ուղղել
ուղղություն
ուղևոր
ուս ուսի
ուրբաթ
փախչել
փարթամ
փթթել
փոխադարձ
փոխհատուցել
փորձ
փրփուր
քաղցած
քաղցր
քառասուն
օգնել
օգուտ
օդ
օդանավ
օվկիանոս
օրեցօր
օրորել
օրորոց
օրհներգ
օրնիբուն
օր օրի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒՄ ՆՎԻՐԵՄ ԻՄ ՍԻՐՏԸ 3

Ս. Մուրադյան, ՅՈԹ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ 3

ԼԱՎ ԸՆԿԵՐԸ *(ըստ Աստվածաշնչի)* 1 4

2 7

Ն. Էբրահիմի, ՈՒՄ ՆՎԻՐԵՄ ԻՄ ՓՈՔՐԻԿ ՍԻՐՏԸ 10

Հովի. Շիրազ, ՀԱՅՐՍ 15

Դ. Ուկլեբա-Գրիգորյան, ՄՈՐ ԺՊԻՏԸ 18

Էդ. դե Ամիչիս, ՄՈՐ ՆԱՄԱԿԸ 20

Ս. Կապուտիկյան, ՏՂԱՅԻՍ 23

Ս. Մկրտչյան ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՀՈՂԱԳՈՐԾԸ 25

Հ. Սահյան, ՊԱՊԸ 28

ՇՆԻԿԸ 31

Պ. Խաչատրյան, ԾԱՌԻ ԽՆԴՐԱՆՔԸ 34

Ն. Միքայելյան, ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ 36

2. ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ 39

Պ. Խաչատրյան, ՀԱՅԱՍՏԱՆ 39

Մ. Խերանյան, ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ 1 42

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ 2 46

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ 49

Վ. Դավթյան, ԽԱՉՔԱՐ 53

Վ. Պետրոսյան, ՕԵԱԿԱՆՅԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ

1 55

2 58

Հ. Արթենյան, ԱՐԱԳԱԾԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 61

Էդ. դե Ամիչիս, ՓՈՔՐԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ 1 64

2 67

Հովի. Թումանյան, Ա՜Խ, Ի՜ՆՉ ԼԱՎ ԵՆ ՍԱՐԻ ՎՐԱ 70

Ավ. Իսահակյան, ԱՌԳԱՅԻՆ ԵՐԳԸ 1 72

2 75

Իմ տեղեկատուն 1 79

Իմ տեղեկատուն 2 83

Ուղղագրական բառարան 85

Լեզվաբանի դասը

Բառերի կազմությունը (9)

Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ (17)

Գոյական. անձ և իր ցույց տվող գոյականներ (35)

Գոյական. հատուկ և հասարակ (45)

Գոյականի թիվը (57)

Գոյականի ձևային փոփոխությունները (69)

Ածական. համեմատության աստիճանները (78)

Իմաստունի օրատետրից

Հայաստանի Հանրապետության դրոշը (38)

Հայաստանի Հանրապետության զինանշանը (41)

Սասնա ծռեր (45)

Խաչքար (54)

Մածուն (60)

Արագած (63)

Հայաստանի Հանրապետության օրհներգը (78)

Իմաստունի և Տատիկի խորհուրդները

սեր և հոգատարություն մերձավորի և ուրիշների նկատմամբ (14)

աշխատասիրություն (30)

հոգատար վերաբերմունք շրջակա աշխարհի, մարդկանց և կենդանիների նկատմամբ (38)

հյուրընկալություն (60)

Դավիթ Սևանի Գյուրջինյան
Նարինե Հակոբի Հեքեքյան

ՄԱՅՐԵՆԻ

Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք

Մաս 1

(երրորդ, վերամշակված հրատարակություն)

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

Խմբագիր՝ Դ. Գյուրջինյան
Նկարիչ՝ Ս. Այվազյան
Համակարգչային ձևավորումը՝ Ա. Օհանջանյանի

Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպագրական 5.5 մամուլ:
Տպաքանակը՝ 8 749:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am